№ 101 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 № 101

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak"

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՄՇԱԿ

ԼՐԱԳԻՐԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ ԱՐԺԷ

ՉՈՐՍ րուբլի

Մի ամսվայ համար 1 րուբլի

Թիֆլիսի հայ տնայնագործական ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ

Ընդունվում են աշակերտուհիներ

ՋՈՒԼՀԱԿՈՒԹԻՒՆ ՍՈՎՈՐԵԼՈՒ

Ընդունելութեան ժամերը առ. 10—1-ին, Ջուլհականոցի բնակարանում, Գրիբոեդովսկայա № 24, տուն Իզմիրեանի։

2—2
առ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան կողմից. Մեր աշխատակիցներին. Տարվայ քմահաճոյքը. Վերջին տեղեկութիւններ. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կովկասի փոխարքայի ծրագիրը. Սահմանադիր-ռամկավարների կուսակցութեան նախընտրական դեկլարացիան. Ի. Ճավճավաձէի յիշատակին. Փոքրիկ նկատողութիւններ. Խօլերա. Պետական Դումա. Ընտրական օրէնքը. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. Ռուսաստանի կեանքից. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թիւրքահայկական հարցը. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱԻԱՍԻՐԱԿԱՆ Նամակներ Թիւրքիայից և Պարսկաստանից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մենք ուղարկեցինք «Մշակ» լրագիրը բաժանորդներին նրանց նախկին հասցէներով։ Այժմ տեղեկանում ենք, որ կան անձեր, որոնք այժմ տեղափոխվել են իրանց բնակավայրից կամ նոյն բնակավայրում փոխել են իրանց հասցէն։ Խնդրում ենք այդպիսիներից շտապել մեզ ուղարկելու իրանց նոր հասցէները, իսկ մինչև այդ ստանալը մենք ստիպված ենք ուղարկել նախկին հասցէներով։

Ինչպէս յայտնի է, հասցէն փոխելու համար պէտք է վճարել 40 կոպէկ, որ կարելի է ուղարկել պօստային մարկաներով։

Մի քանի տեղերից մեզ հարց են տալիս, թէ ինչ բաղդ է վիճակված այն յօդուածներին, որոնք ուղարկվել էին մեզ «Մշակի» դադարման միջոցում. արդեօք կը տպվեն նրանք ներկայումս։ Մեր պատասխանը հետևեալն է։ Այն յօդուածները, որոնք չեն կորցրել իրանց այժմէութիւնը և ըստ էութեան հնացող նիւթեր չեն, կը տպվեն. մնացածները կը մնան անտիպ։

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Մեր աշխատակիցներից շատերը անդադար հարց էին տալիս մեզ, թէ երբ կը վերսկսվի «Մշակը», որպէսզի նրանք շտապեն ուղարկել իրանց թղթակցութիւնները։

Այժմ, երբ «Մշակի» հրատարակութիւնը վերանորոգված է, մենք յոյս ունենք, որ մեր աշխատակիցները կաջակցեն մեզ ներկայացնելու լրագրի մէջ մեր երկրի կեանքը իր բնորոշ արտայայտութիւններով և ընթացիկ փաստերով։

Մեր աշխատակիցներին վերապահված է մեծ դեր, այն է՝ ցոլացնելու գաւառական կեանքը հասարակական օրգանի մէջ, հրապարակական քննութեան ասպարէզի վրա դնելու տեղական հարցերը, մտքի փոխանակութիւն կատարելու երկրի մասերի մէջ և հնարաւորութիւն տալու, որ գաւառական խուլ անկիւնները օգտվեն այն մեծ կուլտուրական ույժից, որ ներկայացնում է մամուլը։

Աշխատակիցներ, դուք անցեալում էական և արդիւնաւէտ դեր էք կատարել ձեր յօդուածներով և թղթակցութիւններով թէ այն միջավայրի համար, ուր դուք ապրում էք, և թէ ընդհանրապէս մեր հասարակութեան համար։

Եւ մենք յոյս ունենք, որ ձեր և մեր ընդհանուր գործակցութեամբ մենք կարող կը լինենք պատուով կատարել այն վեհ պարտականութիւնը, որ դընում է մեզ վրա հասարակական օրգանի կոչումը։

ՏԱՐՎԱՅ ՔՄԱՀԱՃՈՅՔԸ

I

Գարնանը մեծ էին մեր յոյսերը տարվայ բերքի վերաբերութեամբ։

Գարունը լաւ էր սկսվել, աշնանացանը աչող բուսել էր, գիւղատնտեսութեան թշնամիները դեռ թոյլ էին։

—Սերմանեցէք, ցանեցէք, յորդորում էինք մենք էլ մեր կողմից գիւղացիներին։ Ցանեցէք, որքան կարելի է շատ, որպէսզի կարող լինէք վերականգնել ձեր տնտեսութիւնը։

Գիւղացիները, յանձն առնելով ամեն նեղութիւն, այլ և օգտվելով Նպաստամատոյց Յանձնաժողովի և կառավարութեան տուած օժանդակութիւնից, մշակեցին մեծ տարածութիւններ։ Անշուշտ գիւղացիները աւելի ևս մեծ ծաւալով կը սերմանէին իրանց հողերը, եթէ սերմացու ունենային և հնարաւորութեան մէջ լինէին մշակելու իրանց հողերը. բայց և այն, ինչ որ սերմանված էր, կարող կը լինէր բաւական մեծ պաշար տալ մեր գիւղական ազգաբնակութեանը և ապահովել նրա ապրուստի մի նշանաւոր մասը։

Սակայն տարվայ դժբաղդութիւնները շատ էին, և մեր գիւղացիների մի ստուար մասը կարօտութեան մէջ է նոյն իսկ այժմ աշնան սկզբում։

II

Ամենամեծ դժբաղդութիւնը երաշտն էր։

Գարնան այն շաբաթներում, երբ անձրևները անհրաժեշտութիւն են, եղանակը անցաւ շատ չորային և ոչ մի կաթիլ անձրև չը թափվեց ծարաւի արտերի վրա։

Հացահատիկները փչացան, խոտը մարգագետիններում և արօտներում չը բարձրացաւ։ Ամբողջ գիւղական շրջանների յոյսերը խորտակվեցին ամենադաժան կերպով։

Ղազախի, Բօրչալուի, Նուխու, Ջիվանշիրի, Շուշու, Զանգեզուրի և ուրիշ շատ տեղերի արտերի այն մասը, որոնք ունէին աշնանացան, կամ վաղ էին ցանված գարնանից, այրվեցին և փչացան։

Յետոյ եկան և անձրևներ, բայց նրանք այլ ևս անկարող էին կենդանութիւն տալ արտերին, որոնք արդէն չորացել էին։

Այդ անձրևները կարող էին օգնել միայն բարձրադիր տեղերի արտերին և իբրօք կարողացան օգնել մի որոշ չափով։ Բայց տափարակներում և լեռնալանջերի ստորին մասերում գտնվող գիւղերի արտերը այլ ևս չը կենդանացան։

III

Մի քանի տեղերում երաշտից յետոյ անձրևների գալը ընդունեց մի օտարոտի բնաւորութիւն, մի սուր և կատաղի արտայայտութիւն։ Փոթորիկը և մրրիկը, բերելով ամպեր և տալով անձրևներ, միևնոյն ժամանակ պատճառեցին նոր տեսակ վնասներ, առաջացնելով հեղեղներ և կարկուտ։

Սարսափելի հեղեղների ենթարկվեց Նոր-Բայազէտ քաղաքը իր շրջակայ գիւղերով յունիսի 26-ի գիշերը։ Առաջացած հեղեղներից վնասվեցին երկրագործի արտերը, տան մթերքները, շատ տներ, խանութներ, ջրաղացներ, աթարի կոյտեր։ Զգալի վնասներ կրեցին Քեօսամահմադ (3902 րուբլու), Փաշաքենդ (2700 րուբլու), Դշլաղ, Քեարիմքենդ, Նօրադուզ և ուրիշ գիւղեր։ Վնասը հասաւ մի քանի տասնեակ հազարի։

Սահմանակից Դարալագեազում անձրևի առատութիւնից մեծացան գետակները և առաջացրին հեղեղներ, որոնցից վնասվեցին Արփա, Էրթիչ, Վերին-Տանձիկ, Չիվա, Գեշին և Էլփին գիւղերի ցանքսերը։

Սաստիկ հեղեղ երկարատև երաշտից յետոյ տեղի էր ունեցել յունիսի 18-ին Գանձակի գաւառի Բարսում գիւղում, որը նոյնպէս ենթարկվեց աւերումների։

Այն արտերը, որոնք հեղեղներից ազատ մնացին, անշուշտ թարմացան և կազդուրվեցին։ Այդպէս օրինակ նոյն Նոր-Բայազէտի գաւառը, որ այնքան մեծ վնասներ ստացաւ հեղեղներից, ունեցաւ զգալի օգուտներ, որովհետև ընդհանրապէս կենդանութիւն ստացաւ և հունձը ապահովվեց։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Օգոստոսի 28-ին Գանձակում զինւորական դատարանը սկսեց քննել այն անձանց դատը, որոնք մեղադրվում էին ոստիկանական գործակալ Լօլաձէի սպանութեան գործում. մեղադրվողների թւում կային երդուեալ-հաւատարմատար Բաբաքխեան, տեղացի վաճառական Աֆանասեան, Լ. Մելիք-Մնացականեան և ուրիշներ։ Դատավարութիւնը շարունակվեց մի քանիք։ օր Այժմ «Т. Л.» լրագրին հեռագրում են Գանձակից, որ զինւորական դատարանը Լօլաձէի սպանութեան մէջ մեղաւոր ճանաչեց մեղադրվողներից Մկրտիչ Յակոբեանին, որին դատապարտեց մահվան պատժի, և Լևոն Աղախանեանին, որին դատապարտեց 15-ամեայ տաժանակիր աշխատանքների։ Մնացածներին դատարանը արդարացրեց։

Գանձակ, 6 սեպտեմբերի։ Բակտէրիօլօգիական քննութիւնը հաստատեց, որ օգոստոսի 29-ին կայարանում հիւանդացած բանւորների մահը խօլերայի հետևանք է։ («Հ. Գ.»)

Բագու։ Բագուի քաղաքապետը «վնասակար ուղղութեան համար» փակեց մահմեդական «Եօլդաշ» լրագիրը, որ լոյս էր տեսնում շաբաթը երկու անգամ. «Եօլդաշը» թիւրք լեզւով միակ առաջադիմական լրագիրն էր ամբողջ Կովկասում։ Լրագիրը լոյս տեսաւ երեք համար։

Բագու։ Պետական գանձարանում երևան է հանված խոշոր կեղծիք, որ մտածված և կատարված է Պետերբուրգում։ Ստացված է 70 հազար րուբլուց աւելի։ (Յ.)

Կ. Պոլիս, 6 սեպտեմբերի (Բիւրօյի թղթ.)։ Միանգամայն լաւատեղեակ աղբիւրից բղխած տեղեկութիւնների համաձայն, Բ. Դուռը յայտնել է դիպլօմատիական ներկայացուցիչներից մի քանիսին, որ Դրամայի միտրոպօլիտը և Գրէվէնի վանքի վանահայրը Բ. Դրան կողմից պատասխանատուութեան կենթարկվեն դատարանով՝ մեղադրվելով պետական յանցանք կատարելու մէջ։

Կ. Պոլիս (Բիւրօյի թղթ.)։ Ալէքսանդրիայից եկած բեռնակիր նաւերի համար նշանակված է երեքօրեայ կարանտին։ («Հ. Գ.»)

Մեր հեռագրական գործակալութիւնը, որ յաճախակի հաղորդում է կարդացող հասարակութեան համար անհետաքրքիր տեղեկութիւններ, իր պարտքն է համարում լռութեամբ անցնել այնպիսի փաստեր, որոնք շատ մօտ են մեր շահերին և որոնց մասին գործակալութիւնը պարտ էր լաւ տեղեակ լինել։

Մի նմանօրինակ նշանաւոր փաստ է հանդիսանում Թէհրանի ռուս դեսպան Ֆօն-Հարտվիգի անմիջական դիմումը մէջլիսին՝ առանձին զեկուցագրով։ Այդ զեկուցագրի բովանդակութիւնը մենք գտնում ենք «Köln. Zeit.»-ի մէջ։

Զեկուցագիրը ուղղված է եղել մէջլիսի նախկին նախագահ Սանի էդ Դաուլէին օգոստոսի միջին, խնդրելով որ նա կարդացվի պարլամենտում։ Զեկուցագրում հաղորդվում է, որ Ռուսաստանը բարեացակամ է վերաբերում Պարսկաստանի արդի զարգացմանը և ողջունում է թէ ազատամտական շարժումը, թէ մէջլիսը։ Սակայն իրերի ներկայ դրութիւնը առաջացրել է խռովութիւններ և անկարգութիւններ նամանաւանդ հիւսիսային սահմանակից նահանգներում. խռովութիւններ, որոնց Ռուսաստանը տանել չէ կարող և որոնց դէմ նա, Ռուսաստանը, ստիպված կը լինի դիմել պատերազմական միջոցների, եթէ պարսից պետութիւնը անկարող լինի ճնշել։

Մէջլիսի նախագահը, քննելով խնդիրը 20 անդամներից բաղկացած մի յանձնաժողովում, պատասխանեց հետևեալը։ Պարսկաստանում շփոթութիւններ առաջ գալը բնական հետևանք է երկրի կազմի կառավարչական հիմունքների փոփոխման։ Սակայն այս տխուր անցքերը չը պիտի առաջացնէին հզօրագոյն ռուս պետութեան աչքում սխալ գաղափարներ։ Չէ՞ որ Ռուսաստանում ևս վերջին երկու տարիները, երբ մտցվեցին սահմանադրական կարգեր, տեղի ունեցան խռովութիւններ և դժգոհութիւններ, և պարսիկ հպատակները կրեցին մեծ կորուստներ թէ արիւնով թէ գոյքով Բագւում և Կովկասի այլ տեղերում։ Պարսկաստանը այժմս հոգս է տանում իր յարաբերութիւնների կանոնաւորելուն, կարգ և ապահովութեան վերականգնեցնելուն երկրի մէջ և նա յոյս ունի, որ այդ ջանքերը մօտիկ ապագայում կապահովեն թէ ներքին և թէ արտաքին խաղաղութիւնը։ Այս պայմաններում նա, մէջլիսի նախագահը, յետ է ուղարկում զեկուցագիրը, խնդրելով նշանակած կտորների ջնջելը, քանի որ միայն այս դէպքում Ռուսաստանի ներկայացուցչի դիտողութիւնները կարող են բարեյաջող տպաւորութիւն թողնել մէջլիսի վրա։

Դուրս ձգվելու են նշանակված զեկուցագրի այն տեղերը, որոնք պարունակում են սպառնալիքներ՝ դիմել զինւորական ույժի՝ սահմանակից նահանգների գրաւման, եթէ այնտեղ խռովութիւնները չեն հանդարտացվի։

Կը համաձայնվի՞ ռուս ներկայացուցիչը մտցնել այդ փոփոխութիւնները իր նօտայում, անյայտ է։

Բերելով օտարազգի լրագրի այս լուրը, «Рѣчь»-ը ընդգծում է, որ «Köln. Z.»-ի արտաքին գործերի վերաբերեալ հաղորդագրութիւնները միշտ արժանահաւատ են լինում։ Սպասենք, թէ արտաքին գործերի մինիստրութիւնը ինչպէս կը բացատրի մեր դեսպանի քայլը, որ օտարոտի է ընդունված դիպլօմատիքական ձևերին, և անտեղի, կտրուկ սպառնալիքներ է պարունակում՝ միայն գործածական յարաբերութիւնների մօտալուտ խզման ժամանակ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ

Հեռագիրն արդէն հաղորդեց, որ մինիստրների խորհուրդը քննեց Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայ գեներալ-ադիւտանտ Ի. Ի. Վօրոնցօվ-Դաշկօվի ամենահպատակօրէն զեկուցումը Կովկասի վարչութեան վերաբերմամբ, որի մէջ գծագրված են մի շարք բարեփոխութիւններ, որոնց նպատակն է կուլտուրապէս և տնտեսապէս բարձրացնել Կովկասեան երկիրը։ Այժմ «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ ծրագրված միջոցների շարքում առանձին ուշադրութիւն են գրաւում.

1) Գիւղացիների դրութեան բարելաւումը, այն է՝ վերացնել գիւղացիների կախում ունենալը կալուածատէրերից, որը արտայայտվում էր նրանում, որ գիւղացիները իրանց բերքի մի մասը տալիս էին կալուածատէրերին։ Պետական գիւղացիներին և գաղթականներին սեփականութեան իրաւունք տալ իրանց ձեռքում ունեցած հողերի վրա։ Այժմ տեղի ունեցող հողա-կարգադրական աշխատանքները փոխարինել հողերի դատաստանական սահմանաչափութեամբ, որպէս միջոց հողերի շուտափոյթ բարեկարգութեան, որ սկսված է Անդրկովկասում։ Ճանաչել Դաղստանի շրջանի, Զաքթալի շրջանի, Բաթումի և Կարսի շրջանների ազգաբնակութեան սեփականութեան իրաւունքը իրանց ձեռքում ունեցած հողերի վրա։

2) Հարկատուութեան վերաբերմամբ։ Փոխարինել կապալավարձը պետական հողային հարկով, մի փոքր բարձրացնելով վերջինը։ Ըստ կարելւոյն զեմսկի հաւասարաչափ հարկի ենթարկել երկրի բոլոր հողերը, այն է գիւղացիական մասնաւոր սեփականատէրերի և արքունական։ Արքունական հաշւով պահել ոստիկանական պահակախումբը, որը ծանր բեռն է դարձել զեմսկի բիւդժէտի վրա։ Վերացնել զինւորագրական հարկը մահմեդականներից այն դէպքում, եթէ նրանք կենթարկվեն զինւորագրութեանը առանձին մշակված հիմունքներով, կամ փոփոխութեան ենթարկել այդ հարկն առնելու եղանակը այն դէպքում, եթէ նրանք չեն մտնում զօրքերի շարքը։

3) Ժողովրդական լուսաւորութեան վերաբերմամբ։ Դասատուութիւնը ստորին և միջին դպրոցում պէտք է լինի ոչ միայն ռուսաց (պետութեան) լեզւով, այլև մայրենի (տեղական) լեզւով։ Պէտք է հիմնել առանձին ուսուցչական սեմինարիա ուսուցիչներ պատրաստելու համար. պէտք է ընդհանուր հանգանակութիւն բանալ փոխարքայութեան սահմաններում բարձրագոյն դպրոց—համալսարան հիմնելու համար Թիֆլիսում։ Ծախել Կովկասեան Թանգարանի շինութիւնը, նոյնպէս և այն հողաբաժինները, որ նա ունի գրաւած, և դրանից ստացված գումարներով կառուցանել մի նոր շինութիւն, որը բաւարարութիւն կը տար մի այդպիսի հիմնարկութեան պահանջներին։

4) Դատաստանական վարչութեան վերաբերմամբ։ Բարեփոխել ստորին դատարանները։ Ամբողջ Կովկասում ըստ կարելւոյն մտցնել երդուեալ դատաւորներ ունեցող դատարաններ։ Բարւոքել քննիչ իշխանութեան դրութիւնը։

5) Տեղական վարչութեան վերաբերմամբ։ Վերացնել զինւորա-ժողովրդական վարչութիւնները Դաղստանի, Կարսի և Բաթումի շրջաններում և Զաքաթալի և Սուխումի շրջաններում, մտցնելով վերոյիշեալ տեղերում անհրաժեշտ փոփոխութիւններով նահանգական վարչութեան մշակվող ընդհանուր սիստեմը։ Գիւղական վարչութեան վերակազմութիւնը ինքնավարութեան հիմունքներով։ Մտցնել երկրի մէջ զեմսկի հիմնարկութիւնները, և

6) Փոխարքայութեան կենտրոնական վարչութեան վերաբերմամբ։ Սերտ կապ հաստատել Փոխարքայի և կենտրոնական կառավարութեան միջև, մտցնելով Փոխարքային Մինիստրների Խորհրդի կազմի մէջ, իսկ Պետերբուրգից նրա բացակայութեան ժամանակ—նրան փոխարինող անձնաւորութեան, և մտցնելով փոխարքայութեան վարչութեան մէջ առանձին ատեանների ներկայացուցիչներին այն պայմանով, որ այդ ներկայացուցիչները մտնէին փոխարքայութեան խորհրդի կազմի մէջ, ստանային իրանց մինիստրներից ընդհանուր ցուցմունքներ և զեկուցանողներ լինէին իրանց ատեանների գործերի վերաբերմամբ Փոխարքայի մօտ։ Փոփոխել Փոխարքայի խորհրդի կազմը և կօմպետենցիան, լրացնելով այդ կազմը հասարակական ույժերով՝ տեղական զեմստվային հիմնարկութիւնների ընտրութեան միջոցով։

Վերոյիշեալ մտադրութիւնները կենթարկվեն կրկին մշակութեան, համաձայն Մինիստրների Խորհրդի ցուցմունքների, և ապա կը կազմեն օրէնսդրական առաջադրութիւնների առարկայ, որոնք իր ժամանակ կառաջարկվեն Պետական Դումայի հաւանութեանը։

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ-ՌԱՄԿԱՎԱՐՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԴԵԿԼԱՐԱՑԻԱՆ

Սահմանադիր-ռամկավարների ներկայացուցիչների ժողովում, որ կայացաւ մօտ ծրերս, մշակվեց նախընտրական դեկլարացիա, որի էութիւնը հետեւեալն է:

Երկրի իսկական հանգստութեան և վերածնութեան համար կայ միայն մի ճանապարհ, հէնց այն, որպիսին դեռ սկզբից և եթ մատնանշել է ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը,—սահմանադիր կարգ ու կանոնի հաստատումն և դեմօկրատիական բարենորոգումների վճռական գործադրութիւն: Ռուսաստանը պէտք է մտնէ, և անխուսափելիօրէն կը մտնէ, այդ ճանապարհի մէջ, որովհետև նրա համար մի ուրիշ ելք չը կայ: Ահա ինչու, հաստատ հաւատալով սկսված գործի աջողութեանը և չը խրտնելով նրա ճանապարհին դրած խոչընդոտներից, ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը Պետական Դումա է գնում նոյն դրօշակով, որի տակ նա աշխատել է առաջին և երկրորդ Դումաներում, մազաչափ անգամ չը շեղվելով իր ծրագրից: Ինչպէս դեմօկրատիական կուսակցութիւն, նա ջանալու է իրականացնել այն օրէնքները, որոնք ապահովում են աշխատաւոր ազգաբնակութեան շահերը. մասնաւորապէս, ագրարային հարցի վերաբերութեամբ, ամուր կանգնելու է սեփողական գրաւման սկզբունքի վրա: Ինչպէս սահմանադիր կուսակցութիւն, նա ամբողջ ույժերով կռւելու է ժողովրդի սահմանադիր իրաւունքների խախտման դէմ և իր նպատակն է դնելու այդ իրաւունքների ընդլայնումը, ձգտելով կեանքի մէջ մտցնել ընդ. ընտրողական իրաւունքը երկրորդ Պ. Դ. մշակած նախագծի համաձայն: Ընդունելով որ ընդհանուր ժողովրդի ակտիվ մասնակցութիւնը միայն իր կեանքի կանօնաւորութեան գործի մէջ կարող է ապահովել երկրի հաստատ բարեկեցիկ վիճակը և ստեղծել կայուն յենարան՝ հէնց իր ժողովրդական ներկայացուցչութեան համար, ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը երրորդ Պ. Դումայում իր ամենամօտիկ նպատակն է դնելու տեղական ինքնավարութեան բարենորոգումը լայն դեմօկրատիական սկզբունքների վրա:

Ընտրութիւնների վախճանից կախված կը լինի, թէ ինչ չափով հնարաւոր կը դառնայ անցկացնել ժողովրդական պահանջները երրորդ Պ. Դումայում: Ժողովրդական բարեկեցութեան իրագործումը ձեռք կը բերվի միայն յամառ և տոկուն կռւով: Սակայն այդ կռւի մէջ ընտրութիւններին մասնակցելը և պարլամենտական գործունէութիւնը, նոյնիսկ ամենաանաջող պայմաններում, ուժեղ զէնք են հանդիսանում:

Եթէ, ջանքերը կրկնապատկելով, աջողվի, նոյն իսկ այժմեան օրէնքի ժամանակ, Դումա մտցնել ժողովրդական շահերի պաշտպաններին, եթէ նոյն իսկ այն ընտրողները, որոնց վրա դրել է բիւրոկրատիան իր վերջին յոյսերը, ժողովրդի գործի կողմնակից կը լինեն, այն ժամանակ պարզ կը լինի, որ հին կարգի կողմնակիցները ոչ մի աջակցութիւն և պաշտպանութիւն չեն գտնում ոչ մի ազդեցիկ հասարակական դասակարգի մէջ,—և նրանք կարող չեն լինի այլևս յամառել և դէմ կենալ երկրի պահանջների իրականացմանը: Բայց եթէ նոյն իսկ ժողովրդական ազատութեան պաշտպաններին ընտրողական կռւում չաջողվի էլ յաղթել այն արգելքներին, որոնք յարուցված են յունիսի 3-ի ակտով ադմինիստրացիայի կողմից, այդօրինակ դէպքում իսկ նրանք կիմանան, որ Դումայում իրանց սակաւաթիւ ներկայացուցիչների ետեւում կանգնած է երկրի հոծ մեծամասնութիւնը:

Եւ յենվելով ազգաբնակութեան համակրանքի վրա, նրանք կօգտվեն Դումայում իրանց ներկայութիւնից, որպէս զի օրէնսդրական նախագծերի լուրջ քննադատութեամբ երևան հանեն նրանց անհամապատասխան լինելը ամբողջ ազգաբնակութեան շահերին և լաւագոյնը ձեռք ձգեն: Այս քննադատութեամբ և պարլամենտական այլ միջոցներով նրանք երկրի առաջ կը բանան ռէակցիայի բուն իղձերը և նպատակները և նրանց դէմ կը դնեն ժողովրդի անունից համարձակ և կտրուկ բողոք: («Тов.»)

Ի. ՃԱՎՃԱՎԱՁԵԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վրաց բանաստեղծ Իլիա Ճավճավաձէի սպանութեան առիթով Վրաստանի և Ռուսաստանի զանազան տեղերից և անկիւններից ցաւակցական և խորին զարոյթի հեռագիրներ ու նամակներ են տպվում տեղական ռուս և վրաց լրագիրներում: Վրաց բոլոր հասարակական, կրթական և այլ հաստատութիւնները թէ պատգամաւորութիւնների, ուղերձների և թէ պսակների միջոցով մասնակցելու են թաղման, որ, ինչպէս արդէն յայտնեցինք, կը կայանայ կիրակի: Զանազան քաղաքներում և գիւղերում հոգեհանգիստներ են կատարվում: Թիֆլիսում եւս մեծ պատրաստութիւններ են տեսնվում թաղումը հանդիսաւոր և շուքով կատարելու համար: Ի թիւս այլոց քաղաքային Դուման իր ամբողջ կազմով պէտք է մասնակցէ թաղման հանդէսին. վրաց դրամատիկական ընկերութիւնը, «Закавказье» թերթը (որ որոշել է նաև մի համար հրատարակել՝ ամբողջովին նուիրված մեծ բանաստեղծի յիշատակին), Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութիւնը, Թիֆլիսի Արտիստական ընկերութիւնը և ուրիշ շատ հաստատութիւններ որոշել են թէ պսակներ դնել և թէ իրանց ամբողջ կազմով ներկայ լինել. քաղաքային դպրոցական յանձնաժողովը որոշել է քաղաքային բոլոր դպրոցների սաներին և սանուհիներին կանգնեցնել թաղման հանդէսի ճանապարհի վրա: Հայկական հաստատութիւններից Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութիւնը, Հայոց Դրամատիկական ընկերութիւնը, «Մշակ» լրագրի խմբագրութիւնը որոշել են իրանց ներկայացուցիչներով թէ մարմնի բերելու օրը, այսօր, և թէ թաղման օրը, կիրակի, ներկայ լինել:

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Շուտով սկսվելու է հայերէն պարբերական ներկայացումների շարքը: Առաջին ներկայացումը կը լինի սեպտեմբերի 24-ին Արտիստական ընկերութեան թատրոնում:

Ներկայ թատրոնական սեզօնը սկսվում է բեմական մշակների համար մի առանձնապէս աննպաստ պայմաններում: Վերջին չորս տարիների թատրոնական գործը ամբողջապէս ծանրացած էր Հայոց Դրամատիկական ընկերութեան վրա, որը ստանում էր խոշոր օժանդակութիւն պ. Մանթաշեանից, տարեկան 5000 ր., իսկ այժմ այդպիսին չը կայ, չը կայ նաև ուրիշ մասնակի օժանդակութիւն:

Դրամ. ընկ. վարչութիւնը և ընդհանուր ժողովը այս տարի որոշել են հրաժարվել անտրեպրիզայից, այլ բաւականանալու են օժանդակութիւն տալով կազմվելիք դերասանական ընկերութեան:

Դերասանական ընկերութիւնն արդէն կազմվել է մեր ունեցած դերասանական երիտասարդ, եռանդուն ույժերից՝ ունենալով օժանդակութիւն 1000 ր. պ. Աֆրիկեանից՝ որպիսի գումարը Դ. ընկ. վարչութիւնը խոստացել է տալու ընկերութեանը և շաբաթական մի ներկայացման վարձ ժողովարանից՝ 150-ական րուբլի:

Այսպիսով, ինչպէս տեսնում է ընթերցողը, մեր բեմի մշակները՝ վստահ իրանց ույժերի վրա՝ դիմում են դէպի գործ՝ մեծ յոյսեր տածելով դէպի հասարակութիւնը, որ նրանք թատրոն յաճախելով հնարաւորութիւն կը տան՝ առանց դիմելու ողորմութեան ստորացուցիչ միջոցներին՝ պահել բեմը:

Պէտք է նկատել, որ հասարակութիւնը այժմեանից հնարաւորութիւն ունի օժանդակելու դերասանական ընկերութեան իրանց լուման՝ առանց մի վնաս կրելու նիւթապէս: Բանը նրանումն է, որ մեր Ընկ. ընդհանուր ժողովը այս տարի վճռել է իւրաքանչիւր անդամին, որ կը վճարէ անդամավճար Դր. ընկ. օգտին տարեկան 5 ր., այդպիսին իրաւունք կունենայ յաճախելու հայոց ներկայացումներին ձրիաբար՝ այդ 5 ր. փոխարէն 6 րուբլու չափ: Այսպիսով թատրոնը կօգտվի նրանով, որ որոշ թւով աբօնենտ կունենայ, իսկ անդամ գրվողը նրանով, որ վճարելով 5 ր., թէ նպաստած կը լինի թատրոնական գործին, թէ կօգտվի 5 ր. փոխարէն 6 րուբլու և թէ միաժամանակ կը հաշվի Դր. ընկ. անդամ և հնարաւորութիւն կունենայ թատրոնական գործը ղեկավարելու:

Դերասանական ընկերութիւնը արդէն իր տրամադրութեան տակ ունի մի քանի նոր ինքնուրոյն պիէսաներ և բազմաթիւ թարգմանական պիէսաներ:

Շնորհաւորելով մեր բեմական աշխատաւորներին ընկերական սկզբունքով գործելու եղանակը, ի սրտէ ցանկանում ենք կատարեալ աջողութիւն, իսկ հասարակութեանը ջերմ կերպով յանձնարարում ենք, որ առաջ գրվել Դր. ընկ. անդամ և օգնել դերասաններին նպաստել նրանց նոր սկսած գործին:

Շիրին

ԽՈԼԵՐԱ

(Հեռագիրներ)

ԱՍՏՐԱԽԱՆ: Սեպտեմբերի 3-ին խոլերայով հիւանդացան 35 հոգի, որոնցից մեռան 21-ը: Ֆորպոստում հիւանդացել են 7 հոգի, մեռել են 5-ը. գաւառներում հիւանդացողների թիւը 42 է, որից մեռել են 15 հոգի:

ՍԻՄԲԻՐՍԿ: Սեպտեմբերի 3-ին Սիզրանում շոգենաւից իջեցրել են խոլերայով հիւանդի: Երկաթուղային հիւանդանոցում մեռան 3 հոգի:

ՍԱՐԱՏՕՎ: Սեպտեմբերի 3-ին խոլերայով հիւանդացան 17 հոգի, մեռան 5-ը: Նահանգում հիւանդացել են 12 հոգի, մեռել են 5 հոգի:

ՍԱՄԱՐԱ: Սեպտեմբերի 3-ին քաղաքում հիւանդացան 4 հոգի, մեռան 2-ը. նահանգում հիւանդացել են 13 հոգի, մեռել են 11-ը:

ԿԱԶԱՆ: Սեպտեմբերի 3-ին Կազանում հիւանդացան 2 հոգի:

ՄՈՍԿՎԱ, 5 սեպտեմբերի: Սանիտարական մասնաժողովը հաստատեց, որ մինչև օրս խոլերայով հիւանդանալու դէպք եղել է ընդամենը 22, իսկ իսկական խոլերայով հիւանդացել է միայն մէկ մարդ:

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ: Հիւանդացան խոլերայով 8 հոգի, մեռաւ մէկը, բժշկվեցին հինգը:

ԵԿԱՏԵՐԻՆՈՍԼԱՎ: Քաղաքում և գաւառում խոլերայով հիւանդանալու և մեռնելու դէպքեր են նկատվում:

ՕՄՍԿ: Սեպտեմբերի 1-ից մինչև օրս հիւանդացել են 16 հոգի, որից մեռել են 5-ը, բժշկվել է մէկը:

ՍԻՄԲԻՐՍԿ: Սիզրանի գաւառում գնացքից իջեցրած և հիւանդանոց է տարված խոլերայով հիւանդ մի մարդ:

ՍԱՐԱՏՕՎ: Հիւանդացան 9 հոգի, մեռաւ մէկը:

ՆՈՎՈՐՈՍԻՅՍԿ: Օգոստոսի 29-ի հիւանդը մեռաւ խոլերայից:

ՍԱՄԱՐԱ: Հիւանդացան 49 հոգի, մեռան 4-ը:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ՄՈՍԿՎԱ, 6 սեպտեմբերի: Կլինսկի գաւառում ընտրված են 30 լիազօրներ շրջանային ժողովների կողմից. նրանցից 4-ը իրանց անուանում են միապետականներ, 18-ը չափաւորականներ, 8-ը իրանց հաշւում են ձախակողմեան:

ԿԱԼՈՒԳԱ: Ժիզդրինսկի, Կալուգայի, Կոզելսկի, Մալօեարոսլավսկի, Մեդինսկի, Մէշչովսկի, Պերեմիշլսկի, Տարուսկի գաւառներում ընտրվել են 280 լիազօրներ շրջանային ժողովների կողմից. նրանցից հինգ հոգին սահմ.-ռամկավարներ են, 166-ը անուանում են իրանց միապետականներ, 28-ը հաշւում են իրանց անկուսակցական աջակողմեանների թւում, 4-ը անկուսակցական ձախակողմեանների թւում: Մնացած 77-ի կուսակցականութիւնը պարզել անհնար եղաւ: Ընտրվածների թւումն է Պետական Դումայի նախկին անդամ Սուրկովը:

ԿԱԼԻՇ: Նահանգի 142 գմիններից լիազօրների ընտրութիւնը կայացաւ 79-ում. մնացած 63-ում չը կայացաւ անդամների օրինական թւի բացակայութեան պատճառով: Բոլոր ընտրվածները իրանց նացիօնալիստներ են անուանում:

ՍԵԴԼԵՑ: Սոկոլովի, Սեդլեցի, Վլոդաւսկի, Կոնստանտինովսկի և Ռադինսկի գաւառներում ընտրվել են 116 լիազօրներ գմինի ժողովներից, որոնցից 2-ը նարօդովցիներ են, 102-ը անուանում են իրանց անկուսակցականներ, 12-ը՝ ժողովրդական դեմօկրատներ: Հողատէրերի կողմից ընտրվել են 138 լիազօրներ, որոնցից 7-ը նարօդովցիներ են, 131-ը՝ իրանց անկուսակցական են անուանում:

ՏՎԵՐ: Տվէրի գաւառում կայացաւ լիազօրների ընտրութիւնը. ընտրվածներից 12-ը սօցիալ-դեմօկրատներ են, 12-ը՝ աջակողմեաններ, 2-ը անկուսակցականներ:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՒ ՆՈՐ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՕՐԷՆՔԸ

«Մշակի» ընդհատման միջոցին մեր ներքին և քաղաքական կեանքի մէջ կատարված ամենախոշոր երևոյթն անշուշտ Պետական Դումայի արձակելն է (յունիսի 3), միաժամանակ նոր ընտրութիւններ նշանակելը՝ նոր Դումա գումարելու համար (նոյեմբերի 1) և նոր ընտրողական օրէնքի հրատարակումը, որով պիտի ղեկավարվել առաջիկայ ընտրութիւններին: *)

Մենք այս սուղ էջերում հնար չունենք տալ թէ բարձրագոյն հրովարտակը, թէ նոր ընտրողական օրէնքի բնագիրը ամբողջովին, հնար չունենք և երկար ու լիուլի տեսութիւն անել նրանց մասին: Ակամայից պիտի բաւականանանք խոշոր նկատողութիւններով և այն էլ սեփողական զգուշութեամբ:

Նախ որ ո՛չ ո՛ք, բացի «միապետականները», չը պաշտպանեց նոր ընտրողական օրէնքի հրատարակման շեղումը այն միակ օրինական ճանապարհից, որ սահմանել էր հոկտեմբերի 17 հրովարտակը և հետեւեալ՝ հիմնական օրէնքների 86 յօդուածը. «Չէ կարելի ոչ մի նոր օրէնք մտցնել առանց հաւանութեան Պետական Խորհրդի և Պետական Դումայի և Թագաւոր Կայսրի հաստատման»: Սահմանադրական օրէնքի այս շեղումի պատճառաբանութիւնը մենք գտնում ենք բարձրագոյն մանիֆեստի այս ուշագրաւ խօսքերում. «Այն իշխանութիւնը, որ բաշխել է առաջին ընտրողական օրէնքը՝ իրաւունք ունի նրան վերացնել և նորով փոխարինել: Աստուածանից է մեզ յանձնված իշխանութիւնը մեր ժողովրդի վրա. նրա գահի առաջ մենք կը տանք պատասխան մեր պետութեան վիճակի մասին»:

Հոկտեմբերեան կուսակցութիւնն անգամ (նոյնպէս «սահմանադրական») իր դիմումի մէջ օրէնքի հրատարակման այս ձևը ճանաչեց հակասահմանադրական, թէև արդարացրեց «տխուր անհրաժեշտութիւնով», իսկ շատ էլ չամաչող «Нов. Вр»-ն բացարձակ խոստովանեց coup d'etat-ն (պետական յեղաշրջում) ի հարկէ համապատասխան թարիֆով: Մնացած հասարակական խաւերը և նրանց արձագանք մամուլը չունեցան երկու կարծիք «սահմանադրական» պրեմիեր-մինիստրի այս նոր քայլի մասին... Անցնենք...

Ընտրողական նոր օրէնքը չէ փոփոխում գրեթէ գոյութիւն ունեցող ընտրողական սիստեմը, սկզբունքը (դասակարգային), միայն այլ կերպ է դասաւորում ընտրողների քանակը և փոխադարձ յարաբերութիւնները, որ ներքևում կը պարզենք:

Հին Դուման բաղկացած էր 519 անդամներից. այժմս այդ թիւը իջել է 442-ի, ասել է պատգամաւորների թիւը քչացել է 77-ով: Այս նոր Դումայում Եւրոպական Ռուսաստանը ունենալու է 403 ներկայացուցիչներ (առաջ 412, իսկ ծայրերը՝ Կովկասը Անդրկովկասի հետ, Լեհաստան և Սիբիր՝ 39 պատգամաւոր: Մի քանի քաղաքականապէս «ոչ հասունացած» երկիրներ և նահանգներ իսպառ զրկված են Դումային մասնակցելու շնորհից. լայնատարած և բազմաժողովուրդ Թուրքեստանը (Անդրկասպեան երկրի հետ), Ակմօլինսկի, Սեմիպալատինսկի, Տուրգայսկի, Եակուտսկի շրջանները և այլն: Ինչպէս վերևից կը նկատվի, պատգամաւորների թւի նշանաւոր պակասեցումը վերաբերում է պետութեան ծայրերին. օրինակ՝ Լեհաստանը կորցնում է 23 ձայն (իրապէս 24, որովհետև մէկ ձայն Վարշավայում այժմս յատկացրած է «ռուս» ազգաբնակչութեան), Կովկասը Անդրկովկասի հետ 19 ձայն (իսկապէս 20, նոյն պատճառով), ասիական Ռուսաստանը՝ 29: Դրա պատճառի մասին մենք

---

*) Սահմանադրական լոկ միայն ձևականութիւնների սիրահարները այս անգամ պիտի գոհ լինեն, որ բարձրագոյն ուկազը ստորագրել է նաև պրեմիեր մինիստրը. արձակման հրովարտակում նշանակված է նոր Դումա հաւաքելու օրը... Միայն և ո՛չ սահմանադրական կարգերում տեղի է ունեցել այդ «անհրաժեշտ» ստորագրութիւնը. անգամ XVIII դարում Եկատերինէի օրով հրովարտակները կնքվում էին մինիստրի ստորագրութեամբ (տես Մ. Նալբանդեանի երկերը հ. 1 եր. 188)

Պ. Զ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

I

Վան, յունիս 16

Մեր վէրան աշխարհի մէջ էլ կեանք չը մնաց. սա, ծանր բեռ մը դարձած, իւրաքանչիւր վայրկեան աւելի ու աւելի կը ճնշէ մեր վրա ու անտանելի կը դառնայ. յուսահատութիւնը իր ամբողջ թափով վերյուշել կուտայ մեզ դեռ երէկը, 96-ի արհաւրալից, ալան-թալանի, հուր ու սրի, ողբերի ու աղաղակների այն սև ու կարմիր օրերը. ու մեր երկրի տնտեսական-քաղաքական-հասարակական դաժան պայմաններին յատուկ սա խօսքը—«Երանի անոնց, որ մեռան...» լաւ կը բնորոշէ մեր հոգեբանական վիճակը: Իսկ թէ ինչն, ո՞վ է մեղաւորը և պատասխանատուն այս բոլորի, դա մի շատ դժուարդ հարց է, որը լուսաբանելու համար այնչափ դեղին-կապոյտ տետրեր լոյս տեսան ու այնչափ հաստափոր հատորներ կազմուեցան ու կը կազմուին:

«Մշակի» ընթերցողներին աւելի շօշափելի դարձնելու համար մեր վիճակը, ես կը պատմեմ օրը օրին պատահածները:

Սովը՝ բնութեան այդ աւերիչ ու կործանիչ զաւակը, ղեկավարուած մարդ-գազանի հրէշային ձեռքով, որքան տուներու ծխնելոյզէն ծխրկացող ծուխը մարեց, որքան ճաճանչող ճժերու ճիչն ու ձէնը շիրմին պաղովը սառեցուց ու որքան բաղխող ձեռներ մուրացող, խնդրող դարձուց. արդեւ մարդը ժայռից էլ կարծր է, որ կը սէ, կը տեսնէ ու կը տոկայ...

II

Այս չէ սակայն ամբողջութիւնը մեր թշուառութեանց. պալատական բիւրոկրատիայի դժոխածին մեքենայութիւններու արգասիք՝ կողոպուտ, թալան ու կոտորածի քամիասարսուռ ահ ու սարսափը, դամոկլեան սրի պէս, մեր գլխին վրա է, պատրաստ ամեն րօպէին իյնալու և այս անգամ վճռականապէս ջախջախելու մեր գոյութիւնը:

Տիրող հացի տագնապը, բակյաններու (յետնեալ տուրք) գանձման առիթով ի գործ դրած խժդժութիւններն ու վաւերացեալ կողոպուտները, ռումբի մը պայթման արկածն ու նրա անխուսափելի հետեւանք խուզարկութիւնները, ձերբակալումները, գաւաճանութիւնները և այս առիթով փօլիս Սահակի տէռոր-ի ենթարկուիլը, այս ամենքը գրեթէ դիւահարացուցած էին մի քանի օրէ ի վեր մասնաւորաբար Վանի հայ հասարակութիւնը, երբ յանկարծ ամսոյս 10-ին (կիրակի) առաւօտ կայծակի արագութեամբ հասնող սա լուրը՝ «Վարագայ սարը կռիւ սկսեց»՝ ցնցեց առհասարակ հայ ազգաբնակութիւնը թափանցելով իր սարսուռը մինչև ոսկորները:

Ժողովուրդը, հետեւանքին ծանրութեան գաղափարէն ընկճուած, սկսաւ պատմել հասնող լուրերը կցկտուր, որք այժմ էլ կը պատմուին նոյն անորոշութիւնով: Իրականութիւնը այս էր միայն, որ կառավարութիւնը յանկարծակի պաշարումով մը բռնելու ջանաց Վարագ*) լեռ գտնուող յեղափոխականներին. երկար կռւէ վերջ ժանդարմ յիւզպաշի Շիւքրի բէյ՝ ամենաստոր կեղեքումների գործադիր և ըստ ոմանց՝ երկու էլ ոստիկան սպանուեցան, իսկ յեղափոխականների կողմէն՝ հայ գիւղացի մը. խնդիրը փակուեցաւ այն օրուան համար, սկզբնաւորութեան չափ անորոշ վերջաւորութիւնով մը:

Կը պատմուի, թէ յեղ. շրջիկ խմբի խմբապետ պ. Յարութիւնը 8—10 զինուորներով Վարագ լեռ գացած էր զինավարժութիւն սորվեցնելու 7—8 այգեստանցի և գիւղացի զինուած երիտասարդներու. գիշեր մինչդեռ անոնք լեռան զառիվերի կէսին, կանաչազարդ բլրակի մը տափարակին վրա գտնուած Վերին Վարագայ վանքին աւերակներէն ձևացած անձաւին մէջ կը քնանային (ըստ ոմանց անոնք քաշուեր էին հիւսիսակողմի վանք, երեք հսկող միայն կային) թողլով պահակ մը, որ սակայն դժբաղդաբար չի կրնար դիմադրել ծանրացող քունին. Վարագայ վանքին քիւրդ նէօբեդարի եղբայրը տեսած ըլլալով կառավարութեան տեղեկութիւն տուած էր. երկու հարիւրէ աւելի ժանդարմներ, ըստ ոմանց երկու լեռնային թնդանօթով, կուսակալի հրամանին համաձայն գիշերով ճամբայ կիյնան ֆէդայիները բռնելու. ասոնցմէ մաս մը Վարագայ վանքին կողմէն ձորամէջով կառաջնորդուէին, ուրիշ բաժին մը՝ հիւս. կողմէն և երրորդ բաժինն ուղղակի Զիաթինուկ ըսուած գագաթէն երթալով Վերին Վարագի բլուրի կողին վրա կը միանան ու լռելեայն կը մօտենան այն տեղին, ուր, ինչպէս գիտցանք, կը հանգչէին հայ զինուորներ. յանկարծ ոստիկանի մը կողմէ սխալ առնուած քայլ մը ծնունդ կուտայ քարի մը աղմկալից գահավիժումին. հայ պահակը ընդոստ արթննալով աղմուկէն, բոլորովին վրատահ իր տուած բացատրութեան ուղղութեան, ընկերոջ կուղղէ խօսքը՝ «Տղայ, լեւսիւ մօտ ի, էլի տես վերեք (քարայծ) էկան վէր ջրին, քար...»: Խօսքը կիսատ կը մնայ. զինուորական համազարկ մը գնդակներու կրակէ կարկուտ կը թափէ քնացածների գլխին, և առաջին անգամից իսկ զգոյշ պահակը՝ վերջին «ախ» մը կը քաշէ կոկորդալի ու կը հանգչի յաւիտենական քունով մը. վեր կը ցատկեն ընկերները և կը սկսին արագօրէն գնդակ ուղղել ոստիկաններու մէկ բաժնին, որ խիզախ իրենց վրա կը դիմէր. զուր չի անցնիր յուսահատներու ճգնաժամային փորձը. ճակատից գնդակահար վար կը գլորուի առաջնորդող յիւզպաշի Շիւքրի բէյ. ասոր մահը սարսափ կը մատնէ ոստիկանները, որոնք անմիջապէս ետ—դէպի զօրաբաժնի կայան կը դառնան, քարերու ետև ապաստանած կռուելու համար. հայ զինուորներն ալ կը թողուն աւեր վանքը և կը բարձրանան դէպի Թոթիկ ճգնաւորի այր կոչուած տեղը՝ յարմար դիրքեր ընտրելու համար, թողլով աւերակի մէջ 4—5 հարփունչի, 4 հրացան, հաց, թաղիք, պատրօն, թուղթերու կապոց մը, որու մէջ գտնուած է 200-ի մօտ տեղացի զինուորագրուածների անուններ մականուններով և այլն: Այդ տեղերից կռիւը կը շարունակուի. հրացաններու ձայնը կը հասնի մինչև մօտակայ Ս. Գրիգորի վանքը, ուր կը գտնուէին Պարսկաստանէն նոր հասած Արամը իր մի քանի ընկերներով (ինչպէս յիշեցինք, Յարութիւն և իր ընկերներ ևս). նախ կը կարծեն, թէ Վերին Վարագ գտնուողները՝ որսալու համար զէնքեր բացեր են. սակայն երբ համազարկերու որոտացող աղմուկը լեռներու ու ձորերու մէջ արձագանգելով իրենց կը հասնի, շուտով կը գուշակեն իրենց կացութիւնը և Կողբանց գիւղի վրայով լեռը կը բարձրանան և մի ուրիշ տեղ դիրք բռնելով կրակ կընեն թուրք ոստիկաններու վրա, միևնոյն ատեն ետևի կողմէն ալ Շուշանից սարեց կրակի կենթարկուին քանի մը շուշանցի կտրիճ երիտասարդներից, որոնք օգնութեան հասեր էին ինքնաբերաբար (այս վերջին պարագան չի ստուգուիր). Թուրքերը կը ջանան քարերու տակ ապաստանած ետ քաշուիլ 4—6 ժամ այսպէս կռուելէ յետոյ. այն միջոցին թանձր մշուշով մը լեռը կը ծածկուի և կարկուտ կը սկսի տեղալ. հայ զինուորներ օգտուելով բնութեան այս օգնութենէն դէպի լեռան կատարը կը բարձրանան ու անհետ կը լինին. այս կերպով խնդիրը կը փակուի. սակայն քաղաքամիջի ու Այգեստանի հայ բնակչութեան կասկած տուող պարագան—Շիւքրի*) բէյի սպանուիլը—այն ատեն կը տարածուի թուրք ժողովրդի մէջ և վրիժառութեան տենչը կը բորբոքի, մանաւանդ որ այդ համեմուած կը լինէր անշուշտ կողոպուտի հրապուրիչ հեռապատկերով:

Արհաւիրքը տարածուեցաւ ամեն կողմ. երկուշաբթի ոչ մէկ հայ համարձակեցաւ քաղաք իջնալ և խանութ բանալ, մանաւանդ որ նոյն օրը կը կատարուէր Շիւքրիի թաղումը. Թիւրքեր գրեթէ չը տեսնուած բազմութեամբ կը յուղարկաւորէին, ամեն վայրկենին պատրաստ դուրս պոռթկացնելու զսպուած կատաղութիւնը *):

III

«Բաղէշի թուրքերը հակառակ կառավարութեան կոտորել են Մշոյ և Բաղէշի բոլոր հայերին. հայ յեղ. խմբապետ Գէորգը սպանուած ու դիակը կախաղան հանուած է. կուսակալը ժողովրդեան չը համաձայնելու համար զօրանոց փախած և հոն պաշարուած է ժողովրդէն. Բաղէշի կուսակալը այստեղից զօրք կը տանի թուրքերին զսպելու համար, որովհետև Բաղէշի զօրքն էլ ժողովրդին միացած է»:

Այս նենգամտօրէն շինուած լուրը կայծակի արագութիւնով տարածուեցաւ թէ հայ և թէ թուրք ժողովրդոց մէջ և աւելի ու աւելի ձգտեց արդէն իսկ լարուած թելը, որ կը սպառնար խզուիլ վերջնականապէս: Հայոց ույժի մասին ունեցած անորոշութիւնը, ռումբերու սարսափը, կառավարութեան տարտամ վիճակը համարձակութիւն չէին ներշնչեր թուրքերին, որոնք յայտնի կը տարուբերուէին երկար առանց որոշ վճռականութեան մը յանգիլ կարենալու: Հակառակ այս ամենուն, երկուշաբթի անցաւ ակարդում ենք հրովարտակում. «Պետական Դուման ստեղծված լինելով Ռուսաց տէրութիւնը ամրապնդելու համար, պիտի լինի ռուսական նաև ոգով։ Այլ ազգութիւնները, որոնք մտնում են մեր պետութեան կազմի մէջ, պիտի ունենան Դումայում իրանց կարիքների համար ներկայացուցիչներ, բայց չը պէտք է լինեն այն թւով, որ հնարաւորութիւն ունենան վճռական դեր խաղալ բուն ռուսական խնդիրներ քննելիս»։

---

*) Վանայ Այգեստանի բաժնէն 5 քլմ. արևելք բարձրացող լեռ մը, որ նեղ ձորով (Գեղի) մը կը բաժնուի իր աջ կողմը գտնուող Զիաթինուկ և Շուշանից քար կոչուած ժայռէն և որու շուրջ կը գտնուին շատ մը վանքեր, որոնք գարնանային ու ամառային այս օրերու մէջ զբօսաշրջիկ ուխտաւորներէ թափուր չեն մնար:

*) Շիւքրիի մարմինը Վարագայ վանքին ծառաներ սանդուղի մը վրա կապելով լեռնէն վար կը տեղափոխեն ոստիկան-հարիւրապետի մը հրամանով:

*) Շիւքրիի սպանուելու, հայ յեղափոխականաց գրեթէ անկորուստ ազատուելու ձախող լուրը կուսակալին կը հասնի ճիշդ այն միջոցին, երբ նա նոր էր ստացած Բաղէշի հեռագիրը: Բաղէշէն հասնող հեռագիրք առանց խնդիրը պարզելու՝ տեղւոյս զինուորական հրամանատարը (ֆրկա կումանդանը) մէկ բանակով Բաղէշ օգնութեան կը կանչէր խիստ փութով:

Մենք այս կէտում, զսպելով մեր ներքին համոզմունքը, երկար չենք խօսի, այլ տեղի կը տանք ոչ ծայրերկրացի ռուս յարգված գրողների կարծիքներին։ «Рус. Бог.» դեկավարներից մին՝ Վ. Ա. Մեակոտինը ասում է. այդպիսով ընդհանուր պետական հարցերը, որոնք պէտք է քննի Դուման, յայտարարված են «բուն ռուսական», և ծայրերի ներկայացուցչութիւնը կրճատված է մինչև վերջին մինիմում (յիշ. ամսագիր № 6 եր. 33)։ «Вѣст. Евр.»-ի ներքին տեսութիւն կազմողը՝ պատկառելի ակադեմիկոս Կ. Կ. Արսենևը նկատում է. «Մեր պետական քաղաքականութիւնը ամբողջ տասնամեակներով, անգամ դարերով, դժուարացնում էր ազգութիւնների մերձեցումը։ Այդ քաղաքականութիւնը ուղղած էր ազգերի արտաքին միացման, իսկ իրապէս նպաստում էր կամ զօրեղացնում նրանց ներքին անջատումը և փոխադարձ օտարացումը։ Նոր դարագլխի սկիզբը պիտի ծառայէր նրանց ներկայացուցչութիւնը Պետական Դումայում՝ բոլորի հաւասար հիմունքների վրա։ Այժմս կրկին տեղի է ունենում դէպի հակառակ կողմի շեղումը, ևս առաւել զգալի, որ նախընթաց շրջանում արվեցին վճռական քայլեր դէպի առաջ։ Իրաւունքի կորցնելը անշուշտ աւելի տանջալից է զգացվում, քան նրա ձեռք բերելու յապաղումը։ Ահա պատճառը այն ծանր տըպաւորութեան, որ ստացվում է նոր ընտրողական օրէնքի մատնացոյց արած մասը կարդալուց (տես յիշ. ամս. յուլիս, 355)։ Ծայրերի հետ մանդատներ (պատգամաւորական ձայներ) կորցրին և շատ քաղաքներ, որ առաջ ընտրում էին առանձին պատգամաւորներ։ Նախկին 26 քաղաքներից այդ շնորհը այժմս վայելում են միայն 7 քաղաքներ—Պետերբուրգը, Մօսկվան, Վարշավան, Լօձը, Րիգան, Օդեսսան և Կիևը։ Այս քաղաքներում (բացի Վարշավան Լօձը) ընտրութիւնները պիտի լինեն ուղղակի և գաղտնի (նորութիւն մեր ընտրողական սիստեմի մէջ), և սահմանված են երկու դաս (կուրիա)՝ խոշոր և մանր սեփականատէրերի, արդիւնաբերողների և վաճառականների։ Օրինակ Մօսկվայի չորս պատգամաւորներից երկուսը ընտրելու է խոշոր դասը, երկուսը մանր դասը։ Րիգան, Օդեսսան և Կիևը այս պատճառով ստացել են մի-մի ձայն նախընթացից աւել, որ կարելի լինի երկու դասին էլ պատգամաւոր ընտրել։ Վարշավան և Լօձը ընտրում են հին հիմունքների համաձայն, այսինքն ոչ ուղղակի ձայնատուութեամբ, այլ պատուիրակների միջոցով. ընդ մին Վարշավան իր առաջվայ երկու ձայնից մէկից զրկվում է՝ յօգուտ «ռուս» պատգամաւորի….։

Այս եօթը քաղաքները ընտրում են 19 պատգամաւոր, որոնցից խոշոր դասը բաժին է ստանում 9 հոգի… «Մուժիկը» չարդարացրեց իր վրա դրած յոյսերը, իսկ հողատէր Բօբրինսկիներ, Պուրիշկեվիչներ փայլուն ապացոյցներ տուեին, թէ ում վրա կարելի է յենվել։ Եւրոպական Ռուսաստանում գիւղացի պատուիրակների թիւը կազմում էր 43%, այժմս նա իջեցրած է մինչև 22%-ի. հողատէրերի ձայների 31% բարձրացրած է մինչև 50%-ի, բանւոր պատուիրակների թիւը 212-ից իջել է մինչև 112, խոշոր հողատէրերը ունեն 745 ձայն, իսկ մանրերը—590…

Հին ընտրողական օրէնքով գիւղական պատուիրակները, նկատում է պ. Մեակոտինը, մեծամասնութիւն էին կազմում 16 նահանգներում, հողատէրերը միայն երկուսում։ Նոր ցուցակով գիւղացիները ոչ մի տեղ մեծամասնութիւն չեն կազմում, իսկ հողատէրերը բացարձակ գերակշռում են մնացած պատուիրակներին 28 նահանգներում, և չորսում կազմում են պատուիրակների ուղիղ կէսը։ Վերջապէս 53 նահանգներում (Եւրոպ. Ռուս.) հողատէրերի և քաղաքների խոշոր սեփականատէրերից պատուիրակները միասին վերցրած գերակշռում են մնացած պատուիրակների թւին։ Այդպիսով պատուիրակների այս խումբը կը կարողանայ անցկացնել թէ իր կուրիայի ցանկալի պատգամաւորները, թէ մնացած կուրիաներում անցկացնել իր քէֆին ուզած թեկնածուներին։

Նոր ընտրողական օրէնքը գիւղացիներին զրկեց նաև մի արտօնութիւնից. նահանգական ընտրողական ժողովում նախքան սահմանված թիւ պատգամաւոր ընտրելը, միայն գիւղացի պատուիրակները ընտրում էին մի գիւղական պատգամաւոր, ապա մնացած դասակարգի պատուիրակների հետ ընտրում այլ պատգամաւորներին։ Այժմս բոլոր դասակարգերը միասին՝ հողատէրերը, քաղաքային խոշոր թէ մանր սեփականատէրերի պատուիրակները (այն քաղաքներից, որ չունեն առանձին ներկայացուցչութիւն), գիւղացի և բանւորական (այն նահանգներում, ուր սահմանված են այդպիսիք) պատուիրակները միասին են ընտրում գիւղացիների համար յատուկ պատգամաւոր։

Նախընթաց ընտրողական օրէնքը նահանգների պատգամաւորներ ո՛ր դասից ընտրելը (բացի գիւղացիական պատգամաւորը) թողնում էր նահանգական ընտրողական ժողովին։ Այժմս ներքին նահանգներում (բացի Արխանգելսկը և Դօնի շրջանը) պարտադիր է ընտրել խոշոր հողատէրերից մի պատգամաւոր, մէկ-մէկ պատգամաւոր քաղաքների խոշոր և մանր սեփականատէրերի ներկայացնող պատուիրակներից. վերջապէս վեց նահանգներում (Պետերբուրգ, Մօսկվա, Վլադիմիր, Կօստրոմա, Եկատերինօսլավ, Խարկօվ) բոլոր պատուիրակները ընտրում են բանւորներից մի-մի պատգամաւոր։ (Ծանօթ.—Առաջ թէև բանւորների պատուիրակների թիւը շատ էր, բայց նրանցից պարտադիր պատգամաւոր ընտրելը չը կար)։

Այդպիսով նոր օրէնքի մէջ դասակարգային սկզբունքը աւելի որոշակի է տարված, իսկ պատուիրակների ձայների դասաւորութիւնը, յարաբերութիւնը բացարձակապէս խոշոր հողատէրերի և սեփականատէրերի կողմն է…

Ակամայից յիշում ես Բիսմարկի գերմանական ռէյխստագում պրուսական լանտագի ընտրողական սիստեմի մասին ասածը. «Ես չը գիտեմ աւելի վատ և անարդար ընտրողական կարգեր, քան պրուսական լանտագինը»…

Կրկնակի ցաւում ենք, որ հնար չունենք աւելի մանրամասն քննել նոր օրէնքը, և ստիպված ենք միայն այս խոշոր գծերին աւելացնել անցողակի կերպով յետագայ կարևոր նկատողութիւնները. գիւղացիների և բանւորների իրաւունքները ենթարկվում են նոր կրճատման. ադմինիստրացիայի ձեռքն է տրված նոր միջոցներ՝ ստեղծելու «հպատակող և գործընդունակ» Դումա կրճատված են ընտրողների նախագումարվելու իրաւունքները և այլն։

Յետագայ յօդուածում մենք կը տանք նոր ընտրողական օրէնքի՝ Անդրկովկասի համար ստեղծած դրութեան մասին՝ մի ակնարկ։

Պետրոս Զաքարեանց

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Կարս, 1 սեպտ.—Օգոստոսը մեր դժբաղդ ուսումնարանի համար մի նոր աղէտ ևս բերեց։ Դեռ ևս ուսուցչական խումբը չը կազմակերպած, հոգաբարձութիւնը ամեն ճիգ գործ էր դնում նոր ուսուցիչներ ընտրելու դեռ դպրոցական միւս գործերը չը վերջացրած, վրա հասաւ հրդեհը, որը ոչընչացրեց դպրոցապատկան բոլոր խանութները. բացի ուսուցիչներ ընտրելը՝ հոգաբարձութեան առաջ դրված էր մի ուրիշ, աւելի մեծ նշանակութիւն ունեցող խնդիր՝ դպրոցի տնտեսական հարցը։

Կարսի դպրոցի պահպանութեան համար ամեն տարի ծախսվում է 12000—14000 ր., որից մօտ 4000 ր. գումարվում է աշակերտական թոշակներից, 3500 ր. ստացվում է դպրոցապատկան խանութներից, մնացած 5000—7000 ր. գումարը հաւաքվում է հասարակութեան զանազան խաւերից ըստ կարողութեան։ Եւ պէտք է ասել—ի պատիւ կարսեցիների—մանադրված դպրոցական գումարի հաւաքելն այնքան էլ դժուարութեան չի հանդիպում։

Առ հասարակ ուսուցչական խմբի վերջնական կազմակերպումը մեզանում տեղի է ունենում օգոստոս ամսի կէսերին, ուստի և հէնց այդ պատճառով հոգաբարձութիւնը ամբողջապէս զբաղված էր առ այժմ բաց մնացած կամ պակասորդ գումարը լրացնելու հարցով։ Նա չէր էլ մտածում, որ շուտով նրա առաջ դրվելու է մի ուրիշ աւելի բարդ խնդիր։ Օգոստոսի 21-ի գիշերվայ հրդեհը, ոչնչացնելով դպրոցապատկան խանութները, բաւական դժուարացրեց հոգաբարձութեան գործը։ Այժմ հասարակութեան առաջ դրվում էր երկու նոր հարց ևս. առաջինը՝ դպրոցական այրված խանութների վերաշինութեան գործը և երկրորդ՝ այդ խանութներից ստացվելիք քրէհ 3500 ր. գումարի լրացնելու խնդիրը։

Մի տարօրինակ զուգադիպութիւն, որ չի կարելի չը յիշել այստեղ, այն է, որ մի 10 օր առաջ «Խաթաբալա» շաբաթաթերթում նկատել էինք Կարսի դպրոցի աւերակ դարձած պատերը և Եղիշէ վարդապետին մօտը կանգնած լալիս։ Ի հարկէ այն ժամանակ դպրոցի շինութիւնն աւերակի այնքան նմանութիւն չունէր, որ նիւթ դառնար «Խաթաբալա» թերթի։ Անշուշտ ուսումնական մասի աւերակութիւնն է ուզեցել ցոյց տալ թղթակիցը, առանց երևակայելու որ մի շաբաթից կատարվելու է իր այդ գուշակութիւնը, «որ ասացեալն էր ի «Խաթաբալա» թերթի»…

Հրդեհի հետևեալ օրը անմիջապէս ընտրըվեց մի մասնաժողով դպրոցապատկան այրված խանութների վերաշինութեան համար, որը և եռանդով սկսել է ժողովարարութիւն. հէնց տեղն ու տեղը հաւաքվում է կամ, աւելի ճիշտն ասած, ստորագրվում են յօգուտ դպրոցապատկան շինութեան մօտ 1000 րուբլի. հետևեալ օրը հաւաքվում է նորից 1000 ր., և այդպէս շարունակվում է։ Ցանկանք գործին աջողութիւն։ Ս.

Գանձակ.—Ամսիս 4-ին Ոսկանապատ գիւղում հայերը ծանր կերպով վիրաւորելով Խաչակապի գիւղացի յայտնի Համբօին՝ յանձնում են իշխանութեանը։

◆ Անցեալ տարվանից փոքր քանակութեամբ գինի է մնացել. այս տարի էլ խաղողը հայերի այգիներում հիանալի բերք է տուել. մի շաբթից յետոյ կը սկսվի այգեկութը։

Երկար ժամանակվայ երաշտից յետոյ սեպտեմբերի 4-ին առատ անձրև եկաւ, որը անպայման վնասաբեր է այգիներին։

◆ Քաղաքիս երկրորդ մասի պրիստաւները այգետէրերից ժողովում են 3000 րուբլի դրամ տուգանքը, որը նշանակված է Թուրք Իսի սպանութեան համար։

Զանգեզուր.— Ինչպէս յայտնի է ընթերցողներին, ներկայ 1907 թ. կառավարութիւնը բաց է թողել Զանգեզուրի կարօտեալներին 142000 րուբլի։

Այդպիսի մի մեծ գումարից թշուառ մինքենդցիներին մի կոպէկ անգամ չէ յատկացված, չնայած որ ամբողջ Գանձակի նահանգում մինքենդցիները բացառութիւն են կազմում բոլոր թալանված գիւղերից, որովհետև ոչ մի գիւղ չէ ենթարկվել այնպիսի թալանի ու կոտորածի, որին ենթարկվեց Մինքենդը։

Ո՞ւմ չէ յայտնի Մենքենդում կատարված բարբարոսութիւնները, ո՞վ կարող է պնդել, որ այդ այդպէս չէ։

Չը նայելով այդ բոլորին՝ այդ գումարը յատկացվում է այն գիւղերին, որոնք թալանել և տարել են մինքենդցիների 200000 ր. չափ կարողութիւնը, որոնք վաղուց են իրանց սերմերը ցանած և օգնութեան անկարօտ։ Օր. Մօլլա-Ահմեդլու, Աղքորփի, Ալխասլու, Շէյնալլու, Փիչանիս, Շալվայ, Սէյիդլար, Սօնասար, Գզլխանում Թօյօլան, Դաշլու, Աղբուլաղ և այլն և այլն… Այն գիւղերը, որոնք չեն ենթարկված բոլորովին թալանի, դրանք են ստանում այդ օգնութիւնը։

Ես չեմ կարողանում հասկանալ, այդ օգնութիւնն ուղարկված է սովեալների ու թալանվածների համար, թէ՞ ապահովների. եթէ ուղարկված է սովեալների ու թալանվածների համար, պէտք է նրանց և յատկացնել։ Մ. Գալստեան

Ախալքալաք. — Յօգուտ Կովկասի հայ սովեալների Ախալքալաքի հայ ժողովրդի մէջ հանգանակութեամբ հաւաքվել է 303 ռուբ. 41 կոպ., որպիսի գումարը մենք ուղարկել ենք, նուիրատու անձանց ցուցակի հետ, Թեմիս սրբազան առաջնորդին դեռ այս տարվայ մայիսին։

Այդ գումարը հաւաքվել է՝ պ. պ. Սարգիս Պապօյեանի և Աղաբէկ Ղազանջեանի ձեռքով. 68 ր. 20 կ., Համազասպ քահանայ Տէր-Գրիգորեանի և Սարգիս Յարութիւնեանցի ձեռքով 51 ր. 25 կոպ., Յովհաննէս Առվանեանի և Արշակ Կարապետեանի—65 ր. 20 կ., Յովհաննէս Սահաթճեանցի, և Պապիկ Ալթունեանցի—50 ր. 20 կ., Յովհաննէս Գրիգորեանի և Պօղոս Կուլոյեանի ձեռքով 36 ր. 96 կոպ., Ստեփան Մեծատունեանցի և Մարտիրոս Ճարպեանի—31 ր. 60 կ., որոնց և յայտնում եմ շնորհակալութիւն։

Նոյն նպատակով Գանձակ գիւղում՝ նոյն գիւղի ծխատէր արժ. Արիստակէս քահանայ Դիւրկէրեանի ձեռքով մեր առաջարկութեամբ հաւաքած 45 ր. այս տարվայ յունվարի 4-ին ուղարկեցինք գերապատիւ առաջնորդին։

Ռեխանէս վ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բ. Խալաթեանի դասախօսութիւնը կովկասագիտական բարձր դասընթացքներում գրաւել էր համարեա այնչափ ունկընդիրներ, ինչպէս Ե. Ս. Տակայշվիլու առաջին դասախօսութիւնը։ Դասընթացքների հիմնադիրները վճռել են դահլիճում աւելացնել նստարանների թիւը։ Ցանկանալով պ. Խալաթեանի դասախօսութիւնները հանրամատչելի դարձնել, դասընթացքների վարչութիւնը նշանակել է 15 կոպ. իւրաքանչիւր անգամ լսելու մշտական ունկընդիրների, իսկ 20 կոպ. պատահական ունկընդիրների համար։

◆ Կովկասեան պատերազմադաշտային դատարանը քննելով Վլադիմիր Գուդաձէի գործը, որը մեղադրվում է Թաղական վերակացու Պիվավարովի կեանքի դէմ մահափորձելու, ոստիկանութեանը զինված դիմադրութիւն ցոյց տալու և Լօլաձէի Թիկնապահի սպանութեան մէջ, դատապարտեց մեղադրվողին մահվան պատժի կախաղանի միջոցով։ Գուդաձէն, սակայն, վճռաբեկ բողոքագիր է ներկայացրել գլխաւոր զինուորական դատարանին։

◆ Սեպտեմբերի 10-ին նշանակված է Թիֆլիսի պօստ-հեռագրական շրջանային բիւրօյի դատը՝ 1905 թ. արած գործադուլի պատճառով։ Մեղադրվում են պաշտօնեաներ Շուր, Կվերկվելաձէ, Սակվարելիձէ, Գերմանօվիչ, Նասիձէ, Րցխիլաձէ, Տէր-Իսրայէլեան, Ալիխանեան, Շահկեան, Պաուլ, Գօրսկի և Խիզանեան պատժ. օրէնսդ. 125-դ, 384-դ և 344-դ յօդուածներով։ Մեղադրվողներին պաշտպանում են երդուեալ-հաւատարմատարներ՝ Մ. Գրուզենբերգ, Ե. Դօլուխանեան, Տ. Յովհաննիսեան և ուրիշներ։ Վկաներ պրօկուրորի և պաշտպանների կողմից կանչված են մօտ 140 հոգի։

◆ Սեպտեմբերի 5-ին քաղաքային քիմիկոսը զեկուցել է քաղաքային վարչութեանը այն հետևանքների մասին, որ նա ստացել է խմելու ջուրը քիմիաբակտերիօլօգիական քննութեան ենթարկելուց յետոյ։ Նա փորձի համար վերցրել է Աւճալայի ջրամբարից, սահմանային նօրժայից պակաս լաւ խմելու ջրի համար. ամմիակ, բորակ (ազոտ) և բորակածին բոլորովին չեն եղել։ Խօլերայի բացիլներ չեն երևացել։

◆ Քաղաքային վարչութիւնը խնդրել է ոստիկանապետին՝ կարգադրութիւն անել, որպէսզի ոստիկանական պաշտօնեաները պարտաւորեցնեն քաղաքի բնակիչներին չը պահել խոզեր իրանց բակերում և նրանց բաց չը թողնել փողոցներում։

◆ Երկրի բարձր իշխանութիւնը հաստատել է Թիֆլիսում բացվելիք ֆելդշեր Նացվալօվի ֆելդշերական գրասենեակի կանոնադրութիւնը. Նրանք, որոնք կարիք կունենան ֆելդշերների, ֆելդշերուհիների, մասաժիստների և խնամատարների՝ հիւանդներին նայելու համար, կարող են դիմել յիշեալ գրասենեակին։ Հրաւիրվածների աշխատանքի վարձը որոշելու է որոշ ժամանակամիջոցով Թիֆլիսի բժշկական վարչութիւնը։

◆ Քաղաքային վարչութիւնը ստացել է բժ. Ա. Խատիսեանի՝ խօլերայի մասին կազ-

---

ռանց յայտնի միջադէպի. յաջորդ գիշեր մեծ գործունէութիւն կար բոլոր շրջանակներին—կառավարական, թուրք ժողովրդեան և հայ ժողովրդեան—մէջ. ամբողջ երկիրը գիշերուան խաւարէն պատսպարուած տենդային ամենասաստիկ նոպայէ մը բռնուած կը չարչարուէր։

IV

Խաւարածին դաւաճանութիւնը գիշերանց ոտքի էր հանած ոստիկանութիւնը. սպանուած Շիւքրիի բարեկամները, մանաւանդ անոր—Թաբուր-աղասը Հիւսնին, յայտնի եղեռնագործ, տեղւոյս սուլթանականներու, այսինքն նրա հայաջինջ քաղաքականութեան ֆանատիկ հետևորդներու պարագլուխ և իր ընկերն ու օգնական Մէհմէդ բէյ, տեղւոյս քաղաքագլուխ (բէլէդիյէ րէյիսի) իրենց գրգռող պրօպագանդիստներով ոտքի էին հանած ամբողջ Շամիրամայ-Տակ թաղի և շրջակայից թուրքերին առհասարակ։ Ինքնապաշտպանութեան—միակ յոյս հայի գոյութեան—բնական զգացումն էլ ոտքի էր հանած հայերին։ Գիշերը իր մթասքօղ թևերով ծածկած էր այս ամեն գործունէութիւններ, որոնք յաջորդող առաւօտուն միջնադարեան տեսարան մը, լանկթիմուրեան շրջան մը, մէկ խօսքով 96-ը իր բոլոր սարսռեցնող դրուագներով կերկնէին կարծես։

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ*)

Մի յետադարձ ակնարկ անցեալ դէպքերի վրա։

Թաւրիզ, մայիսի 15-ին

Վերջին նամակով յայտնել էի Թէհրանի գործադուլի մասին. ինչպէս յայտնվեց, այդ գործադուլը տևել է միայն 24 ժամ։ Այդ լուրը կայծականահարեց տեղական «անջումանին», որի յուսահատութեան բաժակը լըցվէր էր արդէն, և այսօր, 15-օրեայ քաղաքական անօգուտ գործադուլից յետ, ստիպված եղաւ վերջ տալ և բազարը բանալ։

Այսօր այլևս այն ոգևորված, յոխորտացող հասարակութեանը չէք պատահում. նախկին մոլի հակակառավարչականների մեծամասնութիւնը հիմա «հակաանջումանականներ» են դառել. հայհոյվում են ղեկավար անջումանականները. ամբոխի զայրոյթը հետզհետէ աւելի բեղմնաւորվում է դրանց դէմ, և եթէ փախուստի ճանապարհ տրվելու լինի՝ վաղուց մեր «անջումանի» ռեւեօրներ Միր Հաշիմը և Շէյխ Սալիմը կծիկը դրած կը լինէին։ Յատուկ ֆիդայիներ հսկում են հեռագրատանը «անջումանի» մի քանի պատգամաւորների վրա, որ չը փախչեն, որովհետև ամբոխը դրանցից պահանջում է «կանօննամէն», հակառակ դէպքում համարելով դրանց պատճառ իրանց բոլոր վնասների և պատասխանատու ամբողջ Ատրպատականի ազգաբնակութեան դիմաց։ Ինչպէս երևում է, կառավարութեան թելադրութեամբ յայտնի Բօյուկ խանը ասպատակում է շրջակայ այն գիւղերը, ուր անջումանային պրօպագանդիստներ էին գնացած եղել։ Բնաւեր գիւղացիք ստիպված են անիծել «անջումանին», որը պատճառ դարձաւ իրանց կործանման։ Թէհրանի միօրեայ գործադուլը թէ ինչից էր սկիզբն առել և ինչո՞ւ այդպէս շուտ վերջացաւ՝ մեզ յայտնի չէ, բայց փաստ է, որ կշիռքի նժարը հետզհետէ թեքվում է կառավարութեան ի նպաստ։ Կանխագուշակութիւն չը պիտի համարել, եթէ ասենք, որ Թաւրիզի «անջումանը» անյոյս հոգեվարքի մէջ է գտընվում։ Հեռագրատանը նստած են մնացել մի քանի պատգամաւորներ, իսկ ամբոխը ցրվել է՝ իր գլխի ճարը մտածելու և իր առօրեայ խանգարված գործերը կարգի գնելու։

Այսպիսով մարդ գալիս է վերջնականապէս այն համոզման, որ Պարսկաստանը խիդապէս իր ուրոյն պօլիտիկը, իր ուրոյն գործելակերպը ունի։ Ըստ պարսկական առասացուածի պարսիկ կառավարութիւնը «սայլակ նստած՝ նապաստակ որսալ գիտէ»։

Այսօրվայ սուսիկ-փուսիկ բազար բանալը հաստատում է այդ բոլորը։

Այս բոլորով հանդերձ՝ չենք ուզում ասել, որ ամեն ինչ վերջացաւ և այսուհետև պետութեան ներհը վրդովող չի լինի, ընդհակառակը այսուհետև պետութիւնը յաւիտեան հանգիստ քուն ունենալ չէ կարող…

Մայիսի 16-ին

Թէհրանի միօրեայ գործադուլի մասին հետևեալն է խօսվում։ Աւարառու Բօյուկ խանի մասին տեղիցս գանգատվում են Թէհրանի «մէջլիսին». «մէջլիսը» պահանջում է կառավարութիւնից ձերբակալել յիշեալի հօրը՝ Ռահիմ խանին, որը, ներկայումս որպէս Շահի թիկնապահի, իր հեծելազօրքով գտնվում է Թէհրանում. կառավարութիւնը ընդիմանալուն պէս բազարը կողպվում է. երկրորդ օրը, երբ շղթայվում և բանտարկվում է յիշեալ խանը, անմիջապէս գործադուլը վերջանում է։ Ռահիմ խանի ձերբակալվելը պատճառաբանվում է նրանով, որ իբր յիշեալի կարգադրութեամբ է որդին աւերում Ատրպատականի գիւղերը, մինչդեռ պարզ է, որ այդպէս չէ. եթէ բարձրագոյն հրաման չը լինի, այդ համարձակութիւնը Բօյուկ խանը անել չէ կարող։ Իսկ Ռահիմ խանի ձերբակալելը և ձևական շղթայելը միայն մտքերը խաղաղեցնելու համար պիտի եղած լինի, որովհետև հէնց այսօր յիշեալը հեռագրած է եղել որդուն, որ նորից ձիաւոր զօրք ուղարկէ Թէհրան. այս լուրը լսելուն պէս հասարակութեան զայրոյթը իր գագաթնակէտին հասաւ։ Բօյուկ խանը այնպիսի սարսափ է ազդել տեղիս վրա, որ մեծ քանակութիւն ֆիդայիների, կամաւորների գիշեր ու ցերեկ հսկում են քաղաքի շրջակայքում և փողոցներում, որպէսզի յանկարծ յիշեալը ներս չը խուժէ քաղաք։ Թէ ինչ մարդ է յիշեալի հայր Ռահիմ խանը, որը, ինչպէս ասացի, պետական բարձր պաշտօնեայ է, այս քանը կասեմ, որ մի քանի անգամներ իր աւարառութիւնների, բազմաթիւ սպանութիւնների պատճառով մահվան է դատապարտված եղել հանգուցեալ Մուզաֆէրէդդին Շահի օրով, բայց ամենակարող ոսկիների շնորհիւ ամեն անգամ էլ կարողացել է խալսել դահճի ձեռքից։ Պարսկաստանում շատ այսպիսի մարդիկ պետական բարձր պաշտօնեաներ են դառնում հէնց իրանց վերոյիշեալ ունակութիւնների պատճառով։ Ներկայումս Ռահիմ խանը պետութեան պաշտօնեաների շարքում ամենակարողներից կարելի է համարել, իբր արիւնարբու, գազան հեծելազօրքի պատճառով, որոնց, ներկայ հանգամանքներում, հին ռէժիմը շատ պէտք ունի։ Այդ է պատճառը, որ կասկածելի է թւում նրա իրօք շղթայվել, բանտարկվելը և պետութեան վատ տրամադրութիւնը դէպի նա։ Այսօր բազարը կիսաբաց կարելի է համարել. մեծ վաճառատները և սեղանաւորները փակ են. հեռագրատանը նստողները աչքները յառած Թէհրանի ապպարատին սպասում են։

Մայիսի 17-ին

Բազարը այսօր բաց է, բացառութեամբ մեծ վաճառատների և սեղանաւորների։ Անջումանի անդամ յայտնի Միր Հաշիմին ժողովուրդը ստիպեց հեռանալ հեռագրատնից. սրա անկեղծութեան մասին քանի օր էր կասկած կար։ Սրանով երկրորդ անգամն է, որ ժողովուրդը հեռացնում է յիշեալին անդամութիւնից. ծիծաղելի կը լինի, եթէ նոյն հասարակութիւնը երրորդ անգամ յիշեալին գործի հրաւիրէ։ Պարսկաստանում ամեն ինչ հաւանական է։ Սովորական երևոյթ է՝ երէկվայ մահվան դատապարտվածին այսօր իշխանութեան ղեկավար տեսնել. այսպիսի հակասութիւնների երկիր է մեր չարաբախտ հայրենիքը։ Այսօր հացավաճառների մօտ հացը շատ սակաւ է. հասարակութիւնը ստիպված է ժամերով սպասել, որ մի քանի փունտ հաց կարողանայ առնել. շատ անգամ էլ ստիպված է ձեռնունայն վերադառնալ։ Օրըստօրէ տնտեսական քայքայումը մեծ չափեր է ստանում։ Անցեալ օրը հայերի մեծ բազմութիւն թափվեց առաջնորդարան՝ խնդրելով, որ իրանց համար հոգացողութիւն լինի. դիմողները այնպիսի մարդիկ են, որոնց համար մահ էր այդպիսի քայլ անելը. բայց ի՞նչ արած, երբ ստամոքսի խնդիրն է հրապարակ գալիս։ Ներկայ դրութիւնը սպանիչ, կործանարար է անխտիր Պարսկաստանի ժողովուրդների համար. առաւել ևս՝ մասնաւորապէս մեզ՝ բախտահալած, դարհալած հայերիս համար։ Գաւառների անիշխանութիւնը աւելի մեծ չափեր է ստանում։ Ղարադաղի ազգային կալուածները կողոպուտի են ենթարկվել շրջակայ թուրք խաներից. այդ խնդրում յանցանքի մի մասն էլ ծանրանում է «Ղալա» թաղի հոգաբարձութեան վրա, որը գիւղի բէկին և գիւղացիներին փոխանակ այս խառը ժամերում գիւղում թողնելու, բերել է տուել քաղաք և ամիսներ է թափառել է տալիս քաղաքիս փողոցներում։ Միթէ պարոնայք հոգաբարձուները չը գիտեն, որ այդ մարդիկ Պարսկաստանի գիւղերում շատ անհրաժեշտ են՝ նման ճգնաժամանքներում յափշտակողների, կողոպտողների դէմ կռուելու, պաշտպանելու համար։ Դարձեալ կրկնում եմ, որ գիւղի բէկին և ներկայացուցիչներին քաղաքում պահելը նպաստաւոր հանգամանքներ է ստեղծում աւարառու աւազակների համար։ Լսում ենք, որ հարկ եղած դիմումները սրբազան առաջնորդը արել է նահանգապետին այդ մասին։

Իրօ

---

*) Այս նամակները գրված են օրագրի ձևով։ Ծ. Խ.

ժած բրօշիւրից 1500 օրինակ՝ ազգաբնակութեան ձրիաբար բաժանելու համար։

◆ Հալաբարի և Նաւթլուղի մի մասի էլեքտրաքարշի գծերը քննելով, տեխնիկներից և էլեքտրոտեխնիկներից բաղկացած յատուկ մասնաժողովը գտել է մի քանի պակասութիւններ գծի կառուցման մէջ, որոնց հեռացնելու համար հարկաւոր կը լինի առնուազն մէկ շաբաթ, որի պատճառով էլ այդ գծերի երթևեկութիւնը, որ սկսվելու էր սեպտ. 5-ից, չը կայացաւ և յետաձգված է մինչև յիշեալ պակասութիւնների վերացումը։

◆ Բօրչալուի գաւառում երևեցած դաշտամկները ոչնչացնելու համար ուղարկված է 1000 շիշ մկան տիֆի հեղուկ։

◆ Թիֆլիսի նահանգի սահմաններում անասունների ժանտախտը ներկայումս երևում է միայն Բօրչալուի գաւառում։

◆ Սեպտեմբերի 5-ին Թիֆլիս-Երևանի երկաթուղու գծի վրա Շահալու և Ղալագիրան կայարանների մէջտեղում տեղի ունեցաւ գնացքի խորտակում, որը բարեբախտաբար մարդկային զոհեր չէ տուել. վնասվել է միայն մի պարոն, որը, կամենալով ազատվել, թռչում է պատուհանից և վնասում ուսը, մէջքը և գլուխը, սակայն ոչ վտանգաւոր կերպով։ Խորտակման պատճառը եղել է ռէլսների լայնանալը։ Ոմանք էլ ենթադրում են, որ գիծը նորոգելիս ռէլսները թոյլ են ամրացրել վինտերով, որից առաջացել է ռէլսների տեղից ցայտքելը։ Գծից դուրս են եկել և թեքվել մի ժայռի վրա գնացքի վերջի երրորդ կարգի երեք վագօնները։ Ականատեսները վկայում են, որ գնացքը եթէ բոլորովին չի խորտակվել, դրա պատճառը նախ այն ժայռն է եղել, որին թեք են ընկել վերջին վագօնները, և երկրորդ՝ պարտական են ներկայ գտնվող մի զինւորի, որը իրան չը կորցնելով վազում է և տորմօզը կանգնեցնում։ Եթէ մի րօպէ ուշ կատարվէր այդ գործողութիւնը, հաւանական է, որ ամենատխուր հետևանքներ ստացվէին և գուցէ ոչ ոք չազատվէր գնացողներից։ Դժբախտութեան տեղն է իսկոյն գնացել երկաթուղու վարչութեան գլխաւորը և քննիչը։ Ճանապարհորդները հասել են Թիֆլիս գիշերը ուշ և սաստիկ սարսափահար եղած։

◆ Սեպտեմբերի 5-ին, երեկոյեան ժամը 6-ին, 5-րդ քաղաքամասում Վիննի զաւիվայրում մի քանի անյայտ չարագործներ յարձակվել են կառքով անցնող Նուխու բնակիչ Զաւադ Ռաֆայէլ-օղլու վրա և ատրճանակից մի քանի անգամ կրակելով սպանել են նրան, իսկ կառապան Ալի Արաս Սաֆարօվին ծանր կերպով վիրաւորել են։ Սպանվածը և վիրաւորվածը ուղարկված են Միքայէլեան հիւանդանոց։ Մարդասպանները անյայտացել են։

◆ «Бакинское Эхо»-ն գրում է. «Սեպտ. 2-ին Բօնդարնի փողոցում տեղի ունեցաւ կրկնակի սպանութիւն վրէժխնդրութեան պատճառներով։ Բագուի բնակիչ Սալման Բագիր-օղլին, արհեստով սուաղող, վերադառնալով Բօնդարնի փողոցով ժամը 5-ին աշխատանքից, հանդիպում է բագուեցի Յուսէյն-բալա Գուլի-օղլուն և պարսկահպատակ Սուլէյման Հաջի-օղլուն, որը բռնաբարել էր նրա հարազատ եղբայր Իսմայիլ-Բագիր-օղլուն (16 տարեկան), և, հանելով ատրճանակը, տեղնուտեղը պառկեցնում է Յուսէյն-բալային երկու գնդակով, իսկ յետոյ ընկնում է Սուլէյմանի ետևից և, հասնելով նրան Կուբինսկի հրապարակում, սպանում է նրան էլ։ Այդ ժամանակ սպանութեան տեղին մօտենում է 2-դ պլաստունեան գնդի 1-ին հարիւրեակի կօզակ Ա. Բրաժնիկովը Շէյն քաղաքապահի օգնութեամբ և ձերբակալում է մարդասպանին։ Հարցուփորձի ժամանակ Բագիր-օղլին բացատրում է այն պատճառները, որոնք դրդեցին նրան կատարել այդպիսի խիստ վրէժխնդրութիւն։ Նրան բանտարկում են բանտում։ Եղելութեան մասին յայտնում են դատախազին և քննիչին»։

◆ Բագուի քաղաքապետը թոյլատրել է Գ. Ա. Ղազար-Աղաջանեանին հրատարակել Բագւում ամենօրեայ լրագիր հայերէն լեզուով «Անի» անունով («Бак. Эхо»)։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Սև հարիւրեակային «Рус. Знамя» թերթի № 190-ը ձերբակալված է և խմբագիր-հրատարակիչ բժ. Ա. Դուբրովինը մեղադրվում է քրէական օրէնսդրութեան 129-դ յօդ. 6-րդ կէտի հիման վրա։

◆ Գլխաւոր ինտենդանտական վարչութեան մէջ կազմված առանձին մասնաժողովը, քննելով ռուս-եապօնական պատերազմի հաշուետւութիւնը, Նադարօվ գեներալից պահանջում է $^1/_2$ միլիօն ռուբլի։

◆ Բանտային գլխաւոր վարչութիւնը դիմել է ներքին գործոց մինիստրութեանը մի գրութիւնով, որով նշանակում է աքսորեալների թուի անդադար աճումը և խնդրում է լրացուցիչ օժանդակութիւն փողով։ 1907 թւի յատկացրած գումարը ամբողջովին սպառվել է և մինչև տարւայ վերջը կարիք կայ 82,000 ռուբլու։ (Тов.)։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՒՐՔԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

I

Արդէն 11 տարի է անցել այն օրից, երբ վարագոյրը ծածկվեց այն սոսկալի եղեռնագործութեան վրա, որին զոհ գնացին աւելի քան 100,000 հայ, չը հաշւելով դեռ այլ անհամար կորուստները։ Արիւնաքամ եղած թիւրքահայ ժողովուրդը դեռ շարունակում է կրել դրա հետևանքը. պարբերական սիստեմաբար գործադրվող բռնութիւններն այնպիսի դառն չքաւորութիւն են առաջ բերել, որի նմանը վաղուց չէր տեսնվել այդ դժբախտ երկրում։

Հայկական 6 նահանգները՝ 1) Կարին (Էրզրում), 2) Բաղէշ (Բիթլիս), 3) Վան, 4) Տիգրանակերտ (Դիարբէքիր), 5) Խարփութ (Մամուրէթ-իւլ-Ազիզ) և 6) Սեբաստիա (Սըվազ), մանաւանդ առաջին 5 վիլայէթները, որոնց համար էր յատկապէս կազմված 1895-ի մայիսեան ծրագիրը, թշուառութեան այնպիսի պատկեր են ներկայացնում, որին հաւասար դժուար է ուրիշ տեղ գտնել։ Այնտեղ, ուր հայը տասնեակ տարի առաջ հոծ բազմութիւն էր կազմում, այժմ այլևս իբրև մեծամասնութիւն կազմող չէ ներկայանում։ Այս նպատակն իրագործելու համար թիւրք կառավարութիւնը, ի մէջ այլ միջոցների, մեծ խմբերով տարէց տարի մահմեդական գաղթականներ է տեղաւորում հայկական նահանգներում։ Թէ որքան եռանդով է առաջ տարվում այս քաղաքականութիւնը, շատ լաւ երևում է հետևեալ փաստից, որը հաղորդեցին Կ. Պօլսի լրագիրները հազիւ 2 ամիս առաջ (1907 յուլիս)։ «Էրզրումի վիլայէթը մինչև հիմա հասել են 9000 մահմեդական գաղթականներ, որոնց 8000-ը գաղթականաց յանձնաժողովի ջանքերով բնակեցրած է Մուշի, Բուլանըքի, Տէրջանի, Նամէրվանի և Ալաշկերտի կողմերում»։ Սրանք խիտ հայաբնակ գաւառներ են, որոնք այսպիսի մահմեդական գաղթականական խմբերի գալով բնականաբար կորցնում են այն բնաւորութիւնն ու այն առաւելութիւնը, որ ունէին իբրև մեծամասնօրէն հայաբնակ։ Եւ այս դեռ մի վիլայէթում. նոյնը սիստեմաբար գործադրվում է միւս վիլայէթներում։ Կառավարութիւնը, գոնէ ըստ երևոյթին, ոչ մի դիւրութիւն չէ խնայում մահմեդական գաղթականներ հրապուրելու համար։ Նրանց համար յատուկ տներ է շինում, ամեն մի գերդաստանին տալիս է 50-ից մինչև 100 դէօնիւմ հող և փողով էլ 50-ական ղրուշ երկրագործական գործիքներ գնելու համար։ Ազատ հողեր ի հարկէ չը կան. բայց երբ կառավարութիւնը ցանկանում է, նա ոչ մի միջոցի առջև կանգ չէ առնում նրանց համար հողեր գտնելու։

Տեղական աւազակային տարրերը՝ շատ անգամ պաշտօնեաների հովանաւորութեան տակ՝ շարունակում են հայի ձեռքից խլել նաև այն փոքր ինչքն, որ նա դառն քրտինքով ձեռք է բերում։ Հայի ոչ կեանքը և ոչ էլ գոյքն է ապահովված կամ պաշտօնական և կամ արհեստով աւազակներից։

Տնտեսական ծանր ճնշման միջոցներից մէկն էլ այն է, որ հայ առևտրականը, հայ անգործ և անհող բանւորը (այդպիսին այժմ կայ) և առհասարակ հայ հպատակը իրաւունք չունի ազատօրէն մի տեղից միւս տեղ երթևեկել։ Ամեն մի անգամ նա պատրաստ է դիմել տեղական իշխանութեան և սա գրեթէ միշտ մերժում է թոյլատրել։ Այս ծայրայեղ բռնութիւնը չափազանց ծանր ազդեցութիւն է անում ժողովրդի տնտեսական վիճակի վրա, ստիպելով նրան սահմանափակել իր աշխատանքը իր գաւառի, շատ անգամ իր քաղաքի և իր գիւղի նեղ սահմաններում։ Տնտեսական ճնշման այսպիսի սոսկալի հանգամանքներում մի աննշան առաջադիմական քայլ ահագին աղմուկներով յայտարարվում է ի լուր աշխարհի։ Օրինակի համար վերջերս թիւրք կառավարութիւնը արտօնութիւն է տուել Վանի լճի վրա շոգենաւ բանեցնել, և արտօնատէրն արդէն պատուիրել է Ամերիկա մի փոքրիկ շոգենաւակ, հազիւ 20 ճանապարհորդի համար. և ահա այդ առիթով Կ. Պօլսի բոլոր լրագիրները գովասանական ներբողներ են յօրինում ի փառս սուլթանի...

Թիւրք կառավարութիւնը կարօտութեան վերջին ծայրն հասած ժողովրդից ամենախիստ կերպով հաւաքում է յետնեալ տուրքերը՝ ծախելով դրա համար քաղաքացու և գիւղացու ամբրսատի ամենաանհրաժեշտ կարիքները։ Բռնութիւնն այս դէպքում հասել է այնպիսի աստիճանի, որ նոյն իսկ եւրոպական դեսպանների միջնորդութեան շնորհիւ Բ. Դուռը հեռագրել է գաւառական իշխանութիւններին մեղմօրէն վարվելու չքաւորների հետ...

Իրերի այս դրութեան մէջ հեշտութեամբ կարելի է բացատրել ժողովրդի գաղտնի պանդխտութիւնը կամ ուղղակի խմբերով օտար երկիրներ փախչելու ձգտումը, որով երկիրը հետզհետէ ամայանում է՝ ազատ տեղ թողնելով թափառական քրդերի և օտար մահմեդական գաղթականների համար։

Այս անտանելի կացութեան արդիւնքն է նաև այն ուղղակի յուսահատական ճիգերը, որ երբեմն-երբեմն կատարում են յեղափոխական խմբերը։ Կառավարութիւնն իր բռնավանդակ ոյժը լարում է այս խմբերին ձեռք ձգելու համար, որից առաջանում է ընդհարում զօրքի և խմբերի միջև։ Վերջին ընդհարումը Գէորգ Չաւուշի մղած յայտնի կռիւն էր, որի արդիւնքն այն եղաւ, որ թիւրքերից սպանվեց և վիրաւորվեց 1 օֆիցեր և 8 զինւոր, իսկ խմբի անդամներից 20 հոգի, որոնց մէջ և Գէորգ Չաւուշը։ Մեծագոյն դժբախտութիւնը կայանում է նրանում, որ ամեն մի այդպիսի ընդհարման ամենածանր բաժինը ընկնում է դարձեալ հայ ժողովրդի վրա։ Մեր յիշատակած վերջին դէպքից յետոյ, ինչպէս իր ժամանակ եւրոպական թերթերը հաղորդեցին, սպանված թիւրք զինւորականների վրէժն առնելու համար, տեղական իշխանութիւնների բացարձակ թոյլտւութեամբ, շրջակայ թիւրք և քիւրդ խուժանը յարձակվեց հայ գիւղերի վրա և Մուշի գաւառի 4 հայ գիւղ կատարելապէս քարուքանդ եղան... Երկիւղը տիրեց ամեն կողմ. հայ ժողովուրդը՝ մանաւանդ Մուշի գաւառի՝ նորից ընկաւ սարսափի մէջ. սպասվում էր աւերում և նոր կոտորած ընդարձակ չափերով։ Բարեբախտաբար ռուսաց և անգլիական դեսպանների ազդու միջամտութիւնը նոր արհաւիրքների առաջն առաւ։ Ռուս և անգլիացի հիւպատոսների տեղն ու տեղը կատարած քննութեան վրա, նոյն դեսպանները խիստ լեզու գործածեցին և այս անգամ սուլթանը, ինչպէս հաղորդեց «Թայմս» (1907 յուլիս 18), «հրաման հանեց նոր զօրք ուղարկել Հայաստան ժողովուրդը պաշտպանելու համար քիւրդ հրոսակների դէմ և միևնոյն ժամանակ ուրիշ քայլեր ևս առնվեցին հայերի գանգատներին բաւարարութիւն տալու համար»։ Այս «քայլերն» իրանց կարգին, բայց բազմաթիւ դժբաղդ փորձեր ոչ մի տարակոյսի տեղ չեն թողնում, որ եթէ դարձեալ մի յեղափոխական խումբ զինեալ բողոքի ձևով երևան գայ, նրա փոխարէն կամ նրա հետ անմիջապէս պիտի տուժէ դարձեալ նոյն հայ ժողովուրդը՝ տալով թէ բազմաթիւ զոհեր և թէ ենթարկվելով նորանոր աւերածութիւնների...

Ահա այն կացութիւնը, որի մէջ գտնվում են այժմ «հայկական նահանգները»։

Ուղիղ 12 տարի է անցել այն օրից, երբ Եւրոպան և Թիւրքիան փոխադարձ համաձայնութեամբ բարենորոգումների վերջին ծրագիրը մշակեցին, որ էր 1905 հոկտեմբեր 15-ին (անգլ. կապոյտ գիրք 1896 № 1 էջ 162), բայց բարենորոգումները մնացել են մեռած տառ կամ առաւելն ի գործ դրվեց բարենորոգումների մի պարօդիա։ Սակայն ժամանակը շատ բան էլ փոփոխութեան ենթարկեց։ Նախ՝ լուրջ շարժումներ տեղի ունեցան առհասարակ Թիւրքիայի ներքին կեանքում, որոնք՝ գէթ ապագայի գնահատութեան համար՝ մեծապէս արժանի են ուշադրութեան. երկրորդ՝ եւրոպական դիւանագիտութիւնն էլ բոլորովին տարբեր վերաբերմունք է ցոյց տալիս այժմ։ Թիւրքահայկական հարցի դրութիւնը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է պարզել այս երկու նոր գործօնները, որը և կաշխատենք կատարել մեր յետագայ յօդուածներով։

Սարուխան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանիա.— Ներկայումս հրատարակված ստատիստիկական տեղեկութիւնների համեմատ, 1905 թւի դեկտեմբերի 1-ին Գերմանիայում կատարված միօրագրական ժողովրդագրութիւնը ցոյց տուեց, որ Գերմանիայի բնակիչների թիւը կազմում էր այն ժամանակ 60,641,378 մարդ, որոնցից 1,028,560 օտարազգիներ էին և 2,256 հոգի, որոնց ում հպատակ լինելը անյայտ էր։ Օտարազգիների թւում կային 106,639 ռուսահպատակներ։

—«Մշակի» այսօրւայ համարից սկսած տպագրում ենք մեր թղթակիցների յօդուածները Թիւրքիայում և Պարսկաստանում վերջին 4—5 ամիսները տեղի ունեցած դէպքերի մասին։ Այդ թղթակցութիւնները դեռ չեն կորցրել իրանց թարմութիւնը և մեծ լոյս են սփռում դէպքերի վրա։ Այդ թղթակցութիւնների առիթով մենք մեր կարծիքը կը յայտնենք։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 սեպտեմբերի

Ներքին

ՕԴԵՍՍԱ։ Երեկոյեան 8 կողոպտիչներ, որոնցից մէկի ձեռքում ռումբ կար, ներս խուժեցին սինագօգը, որ լի էր աղօթող հրէաներով, և յափշտակեցին 500 ռ.։

Քաղաքապետը, այցելելով քաղաքային վարչութիւնը, խնդրեց աջակցել իրան քաղաքում հանգստութիւնը վերականգնելու, խոստանալով ամեն պաշտպանութիւն ցոյց տալ այդ ուղղութեամբ։ Վարչութիւնը իր արտակարգ նիստում որոշեց անմիջապէս առաջարկել դումային միջոցներ մշակել քաղաքի հանգստութեան համար։

ԳԱՆՁԱԿ։ Զանգեզուրի գաւառում, աւազակների հետ հրացանաձգութեան ժամանակ, սպանվել է ոստիկանական պահակներից մէկը։

6 սեպտեմբերի

ԿԻԵՎ։ Ումանսկի գաւառում, Լադիժենկ գիւղաքաղաքում, տօնավաճառում, գիւղացիների ամբոխի մէջ կռիւ սկսվեց։ Կարգը վերահաստատելու փորձող ուրեադնիկին ամբոխը մի լաւ ծեծեց, ապա Պետական Դումայի նախկին անդամ Կուչեէրենկօի առաջնորդութեամբ յարձակվեց մօտեցող պրիստաւի և տասը պահակների վրա։ Պրիստաւը և պահակներից մէկը վիրաւորվեցին քարերով։ Պահակները համազարկ տուին, որի ժամանակ երկու գիւղացի վիրաւորվեցին ծանր կերպով, իսկ հինգը թեթև։ Ամբոխը սկսեց փախչել։ Կուչէրենկօն և այլ դրդիչները ձերբակալվեցին. հանգստութիւնը վերականգնված է։

ԽԱՐԿՕՎ։ Գեներալ-նահանգապետը մի հրաման է արձակել, որով 3 ամսվայ բանտարկութիւնով սպառնալիքով արգելում է ուսանողութեան ընտրողական ագիտացիա անել։

ՈՒՖԱ։ Բանտի բակում զբօսնելու ժամանակ վեց քաղաքական բանտարկեալներ դիմեցին դէպի մուտքը և, վիրաւորելով վերակացուին և դռնապանին, փողոց փախան։ Նրանց ետևից ընկան զինւորները։ Փախչողներից մէկը սպանվեց, երեքը վիրաւորվեցին ծանր և մեռան, մէկը՝ թեթև, իսկ վեցերորդը փախաւ։ Վիրաւորվեց նաև հետապնդող զինւորներից մէկը։ Փախչողները իրանց հետ ունէին բրաունինգներ և ռումբեր, որոնցից մէկը նետեցին զինւորների վրա, սակայն չը պայթեց։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Պատերազմա-դաշտային դատարանը ծովապետ Ցիվինսկու գնդի նաւաստիների վերաբերմամբ կայացրեց հետևեալ վճիռը. համախմբակցութիւն կազմելու ու գոյութիւն ունեցող պետական կազմը տապալելու մտադրութեան և թռուցիկներ տարածելու համար—մէկին ենթարկել աքսորի, իսկ չորսին տաժանակիր աշխատանքների զանազան ժամանակով։

ԳՐՕԴՆՕ։ Ձերբակալվեց Բէլօստօկի ոստիկանապետ Մացեևիչի կեանքի դէմ մահափորձողներից մէկն ևս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինիստրների խորհուրդը, սեպտ. 3-ի նիստում քննելով ժողովրդական լուսաւորութեան մինիստրի առաջարկութիւնը, արգելք չը գտաւ ռուսական համալսարանների բժշկական մասնաժողովներում քննութիւն բռնած կանանց տալ բժշկի կոչման դիպլօմ, փոխարէն նախկին «կին-բժիշկ» վկայականների։

ՕԴԵՍՍԱ։ Քաղաքային հրապարակի վրա ատրճանակի երեք հարուածով վիրաւորվեց մէկ քաղաքապահ։

6 սեպտեմբերի

Արտաքին

ՏՕԿԻՕ։ «Կաշիմա» զրահանաւի կորըստեան ժամանակ վնասվածների թւում են 5 օֆիցեր և 22 նաւաստիներ։ Երկու օֆիցեր և վեց նաւաստի ծանր վիրաւորված են. երկու օֆիցեր և վեց նաւաստի վիրաւորված են թեթև։

ՄՕՆՐԷԱԼ։ (Վօլֆ)։ Սեպտեմբերի 5-ին Ավէնիւ-դէ-կուրսալ բանկի բաժանմունքը մտան երկու հոգի և ներկայացրին բանկի տոմսակ փող ստանալու համար։ Երբ կասսիրը զբաղվեց փողերը համարելով, նրանք սպանեցին նրան ատրճանակի մէկ հարուածով գլխից և կոտրեցին փողի պահարանը։ Հետապնդելու ժամանակ փախչող կողոպտիչները վիրաւորեցին հետապնդողներից չորսին։ Յանցաւորները բռնված են, իսկ փողերը՝ խլված։

ԼՕՆԴՕՆ։ Կապշտադից ստացած Րէյտերի տեղեկութիւնների համաձայն, որովհետև դադարել են օրէնսդրական ժողովի և օրէնսդրական խորհրդի բանակցութիւնները, պրեմիէր-մինիստր Ջէմսօնը խորհուրդ է տուել նահանգապետին արձակել պարլամենտը. արձակումը կը հետևի սեպտեմբերի 5-ին։ Ինչպէս աւելացնում է Րէյտերի գործակալութիւնը, դա նշանակում է, որ ընդհանուր ընտրութիւններում կապի ապստամբները, որոնք զրկված են ձայնի իրաւունքից անգլօ-բուրերի պատերազմի պատճառով, բայց որոնք վերջում մտած են ընտրողների թւում, կարող կը լինեն ձայն տալ, այն էլ անկասկած հօլանդացիների օգտին։

ՀԱԱԳԱ։ (Հաւաս և Րէյտեր)։ Կոնֆերենցիայի երրորդ մասնաժողովի նիստում, ականների հարցի նկատմամբ համաձայնութեան եկան միայն հետևեալ կէտերում. անշարժ ականները, որոնք պոկվում են խարսխից, պէտք է անվտանգ լինեն. նոյնը վերաբերում է նաև շարժուն ականներին, որոնք իրանց նպատակին չեն հասնում։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսիսեան դպրոցի VII դասատունն աւարտած

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՊԱՇՏՕՆ ունենալ հայոց դպրոցներում։ Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն կամ Ֆօմինեայա № 34։ 1—3

Ցանկանում եմ որևէ ՊԱՇՏՕՆ ունենալ. գիտեմ այգեգործութիւն, գինեգործութիւն, անասնապահութիւն, շերամապահութիւն (գործնական)։ Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը։ 1—5

ՓՈՐՁՎԱԾ ՎԱՐԺՈՒՀԻ

սերտում և պատրաստում է աշակերտ-աշակերտուհիներին մինչև հինգերորդ դասատուն, ինչպէս պետական միջնակարգ, նոյնպէս և հայոց բոլոր դպրոցների համար։ Խմբերով իւրաքանչիւրի ամսական դասագինն է 5-ական ռուբլի, իսկ առանձին-առանձին՝ ըստ համաձայնութեան։

Հասցէն՝ Троицкая улица, № 7, кв. Джанджугазова. 1—1

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԹՕԴՈՎ

Պատրաստում եմ դպիրներ հայոց եկեղեցիների համար, ընդամենը չորս ամսվայ ընթացքում անցնելով ամբողջ հայկական եղաժշտութիւնը (շարական, ժամագիրք, պատարագի արարողութիւն)։ Սովորողները ապրում են Էջմիածնում և կարող են մասնակցել ժամերգութեան։ Վճարում են չորս ամսվայ համար 50 ռուբլի, որից 25 ռ. դասընթացի սկզբում։ Դիմել այս հասցէով՝ С. Эчміадзинъ архидіакону Исраелу. 1—6

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

(Կառավարութեան ուսումնարանների իրաւունքներով)

Ընդունվում են աշակերտներ. այբբենական դասարանի համար կէս տարին 20 ռ., պատրաստական դասարանի համար՝ 25 ռուբ., I դասարանի՝ 30 ռուբ.։

Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, քննութիւնները սեպտ. 10-ին, ուսման սկիզբը 15-ին։ (Երկդասեան դպրոցաւարտները առանց քննութեան ընդունվում են I դասարանում)։

Առևտրական դպրոցաւարտները իրաւունք ունեն աստիճան ստանալու, անձնական պատուաւոր քաղաքացիք լինելու և զինւորագրութեան ժամանակ II կարգի դպրոցների արտօնութիւններից օգտվելու։

ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

երկու սեռի անձերի համար. կուրսը 45 ռ.։ Կուկիա, I Թումանովսկայա փող., սեփ. տ. № 13. (ա. օ.) 2—5

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.

Ներկայ տարւայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографія)։

Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքներն սկսվելու են 1907 թ. սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրիաբար։

Դասընթացը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская улица, № 22, ամենայն օր։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ռ. 50 կօպէկ։ 1—10

(կ. ե. հ.)

Электропечатня «Экономія» (А. М. Мугдусіаконовъ съ С-ми.)

Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.